

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Ռ  
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ե Վ Գ Ի Տ Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ե Ն Ե Ր Ի Տ Ա Ր Ա Շ Մ Ա Ն  
Ը Ն Կ Ե Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու՝  
Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


**Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ  
ԵՎ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ**

Երևանում կարդացած հրապարակային  
դասախոսության ընդարձակ տպագրությունը

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Ռ Գ Յ. Հ Ք Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ա Ի Թ Յ Ո Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 9



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագիտական գիտությունների բեկնածու՝  
Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

3K71-11

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԸ  
ԵՎ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Երևանում կարդացած հրապարակային  
դասախոսության ընդարձակ սղագրությունը



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1949

75651

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Լենինը և Ստալինը մեր երկրի ինդուստրիալ զարգացման մասին . . . . .	4
Մեր երկրի ինդուստրացման ստալինյան սլանը . . . . .	10
Ինդուստրացման տեմպերի մասին . . . . .	14
Ինդուստրացման սովետական աղբյուրները և մեթոդները . . . . .	20
Ինդուստրացման հաղթանակը ՍՍՌՄ-ում . . . . .	25
Սոցիալիստական ինդուստրիայի զարգացումը կոմունիզմի նյութական-տեխնիկական բազան է . . . . .	38
Ընկեր Ստալինի առաջնորդությամբ մենք գնում ենք դեպի կոմունիզմ	43

A  $\frac{\pi}{7346}$

О. ОГАНЕСЯН  
Канд. экон. наук

**И. В. СТАЛИН И ИНДУСТРИАЛИЗАЦИЯ  
НАШЕЙ СТРАНЫ**  
( На армянском языке )

Издание Общества по распространению  
политических и научных знаний Арм. ССР  
Ереван, 1949 г.

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութ-  
յունը ժամանակակից հզոր և առաջնակարգ ինդուստրիայի եր-  
կիր է: Նրա անընդգրկելի տերիտորիայի վրա, բոլոր ռեսպուբ-  
լիկաներում և մարզերում, դեպի երկինքն են խոյանում տասնյակ  
հազարավոր հզոր և դերհզոր գործարանների և ֆաբրիկաների  
ծխնելույզները, դոմենյան և մարտենյան հնոցները, նավթահորե-  
րի աշտարակները, էլեկտրակայանների և հիդրոէլեկտրակայանների շեն-  
քերը, քիմիական արդյունաբերության գիգանտները: ՍՍՌՄ-ի  
հողի հարուստ ընդերքում օրնիրում գործում են բազմահազար  
ածխահորեր և հանքահորեր: Նրա սոցիալիստական դաշտերում  
գործում են հարյուր հազարավոր առաջնակարգ տրակտորներ,  
կոմբայններ, բեռնատար և այլ բազմաթիվ մեքենաներ: Նրա  
երկաթուղային, խճուղային և օդային ճանապարհներով երթե-  
կում են բյուրավոր հզոր լոկոմոտիվներ, ժամանակակից ավտո-  
մոբիլներ և առաջնակարգ ինքնաթիռներ: Նրա բանակը հազե-  
ցած է սպառազինության ժամանակակից և առաջնակարգ տեխ-  
նիկայով:

Սովետական Միության ինդուստրիան արտադրում է ժա-  
մանակակից բոլոր կարգի և տեսակի մեքենաներ—սկսած ամե-  
նանուրբ չափումների գործիքներից մինչև ամենահզոր մեքե-  
նաները:

Արդյունաբերության աճման տեմպերի տեսակետից ՍՍՌՄ-ն  
առաջին տեղն է գրավում ամբողջ աշխարհում: Նա առաջին  
տեղն է գրավում ամբողջ աշխարհում նաև արտադրության տեխ-  
նիկայի տեսակետից, արդյունաբերության և գյուղատնտեսու-  
թյան նոր տեխնիկայով հազեցված լինելու տեսակետից:

Մեր երկրի վիթխարի այս ինդուստրիան ստեղծվեց պատ-  
մության մեջ մինչև այժմ և ոչ մի երկրում չտեսնված կարճ  
ժամանակամիջոցում՝ ընդամենը 2—3 հնգամյակի ընթացքում:  
Ստալինյան հնգամյակները ՍՍՌՄ արդյունաբերության տեսա-

կետից հետամնաց և ազրարային երկիրը վերածեցին առաջավոր  
ինդուստրիալ երկրի, մեքենաներ և սարքավորումներ մուծող  
երկրից՝ մեքենաներ և սարքավորում արտադրող երկրի:

Սովետական Միության ինդուստրացման հաղթանակով,  
ինչպես և սոցիալիզմի կառուցման մյուս բոլոր բնագավառնե-  
րում ձեռք բերած հաղթանակներով, մեր երկիրը պարտական է  
նախ և առաջ ընկեր Ստալինին: Նա է, ընկեր Ստալինը, մեր ին-  
դուստրիայի ստեղծողն ու կերտողը: Նա է, ընկեր Ստալինը, որը  
իրեն հատուկ հաստատակամությամբ և վճռականությամբ շա-  
րունակեց և կենսագործեց պրոլետարական ուղուցիայի տիտան  
մեծ կենինի կողմից սկսված գործը մեր երկրի ինդուստրացման  
բնագավառում: Նա է, ընկեր Ստալինը, որ զարգացրեց սոցիալիս-  
տական ինդուստրացման յենինյան ուժմունքը, մշակեց սոցիա-  
լիստական ինդուստրացման մեթոդներն ի տարբերություն կա-  
պիտալիստական ինդուստրացման մեթոդների, մատնանշեց ին-  
դուստրացման աղբյուրները, մշակեց ամբողջ մանրամասնու-  
թյամբ մեր երկրի ինդուստրացման ծրագիրը և մարմնավորե-  
լով այն ստալինյան հնգամյակներում, մորիլիզացրեց սովետա-  
կան ժողովրդի հերոսական ջանքերը այդ հնգամյակները կեն-  
դանի գործի վերածելու պայքարում:

### ԼԵՆԻՆԸ ԵՎ ՍՏԱԼԻՆԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղուցիան նոր դա-  
րագլուխ բացեց մարդկային հասարակության պատմության մեջ:  
Տապալելով կապիտալիստների և կալվածատերերի իշխանու-  
թյունը՝ Ռուսաստանի պրոլետարիատը, բոլշևիկների պարտիայի  
գեկավարությամբ, հաստատեց իր տիրապետությունը երկրում —  
պրոլետարական դիկտատուրան: Դրանով իսկ պրոլետարիատը  
նվաճեց այն քաղաքական բազան, առանց որի հնարավոր չի սո-  
ցիալիզմի կառուցումը Ռուսաստանում և առհասարակ և ոչ մի  
երկրում:

Պրոլետարական դիկտատուրայի և նրա պետական ձևի՝ Սո-  
վետական իշխանության հաստատմամբ Ռուսաստանն իր քա-  
ղաքական կառուցվածքով հասավ և անցավ բոլոր առաջավոր  
կապիտալիստական երկրներից: Սակայն քաղաքական այդ բարձր

կառուցվածքը խարսխովում էր հետամնաց էկոնոմիկայի վրա, արդյունաբերության չափազանց հետամնաց բաղայի վրա: Այսպիսով ստեղծվեց հակասություն երկրի առաջավոր քաղաքական կառուցվածքի և հետամնաց էկոնոմիկայի միջև: Անհրաժեշտ էր լիկվիդացնել այդ հակասությունը, էկոնոմիկան բարձրացնել մինչև քաղաքական կառուցվածքի մակարդակը, օգտագործել պրոլետարիատի ղիկատուրան որպես վճռական ֆակտորի՝ երկրում սոցիալիզմի կառուցման տնտեսական բաղա ստեղծելու համար: Առանց դրան հնարավոր չէր ոչ սոցիալիզմի կառուցումը մեր երկրում և ոչ էլ մեր երկրի ինքնուրույնության սլաշտպանումը կապիտալիստական աշխարհից:

Լենինը դեռևս Հոկտեմբերյան ռևոլուցիայի նախօրյակին, 1917 թվի սեպտեմբերին իր՝ «Սպառնացող կատաստրոֆան և ինչպես պայքարել նրա դեմ» հոդվածում խոսելով այդ ժամանակաշրջանի քաղաքական կառուցվածքի և էկոնոմիկայի փոխհարաբերության մասին, մատնանշում էր հետևյալը.

«Ռևոլուցիան արավ այն, որ Ռուսաստանը մի քանի ամսվա ընթացքում իր Է ա դ ա Է ա կ ա ն կառուցվածքով հասավ առաջավոր երկրներին:

Բայց այդ քիչ է: Պատերազմն անողոք է, նա հարցը դնում է դաժանորեն խիստ՝ կամ կործանվել, կամ հասնել առաջավոր երկրներին և նրանցից անցնել նաև տնտեսապես... Կործանվել կամ ամբողջ ուժով առաջ վազել: Այսպես է դրված հարցը պատմության կողմից»: (Լենին, Երկեր, հատոր 25, 4-րդ հրատ., էջ 338, ընդգծումներն Լենինինն են):

Եթե Լենինի այս խոսքերը վերաբերում էին Հոկտեմբերյան ռևոլուցիայի նախօրյակին, երբ պրոլետարիատը դեռևս քաղաքական իշխանություն չէր նվաճել, ապա առավել ևս նրանք վերաբերում են Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո ստեղծված շրջանին, երբ Ռուսաստանն իր քաղաքական կառուցվածքով ոչ միայն հասավ, այլև անցավ բոլոր առաջավոր կապիտալիստական երկրներին:

Ռուսաստանի տեխնիկա-տնտեսական հետամնացությունը պրոլետարիատը ժառանգեց նախկին բուրժուական և ցարական Ռուսաստանից: Այդ հետամնացությունը դարերի պատմություն ուներ: Նա, այդ հետամնացությունը, զգացվում էր որպես մեծագույն չարիք Ռուսաստանի համար և ռևոլուցիայից առաջ:

Առավել ևս նա զգալի դարձավ պրոլետարական ուսուցիչայից հետո:

Ի՞նչ էր ներկայացնում ցարական Ռուսաստանը երկրի արտադրողական ուժերի զարգացման տեսակետից, նախ և առաջ ինդուստրիալ զարգացման տեսակետից: Եթե իր տերիտորիալ տեսակետից Ռուսաստանը գրավում էր երկրագնդի մեկ վեցերորդ մասը (առաջին տեղը ամբողջ աշխարհում), աղգարնակության քանակի տեսակետից՝ երրորդ տեղը, Չինաստանից և Հրնդկաստանից հետո, ապա արդյունաբերության պրոդուկցիայի արտադրանքի տեսակետից նա գրավում էր հինգերորդ տեղը ամբողջ աշխարհում (ԱՄՆ, Գերմանիա, Յնգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան):

Ինդուստրիայի այնպիսի վճռական ճյուղերը, ինչպիսիք են սև մետաղագործությունը, հաստոցային արդյունաբերությունը, ավտոմոբիլային և տրակտորային արդյունաբերությունը, ավիացիոն արդյունաբերությունը, ժամանակակից քիմիական արդյունաբերությունը, ժամանակակից գյուղմեքենաների արդյունաբերությունը — չկային Ռուսաստանում: Իսկ մյուս ճյուղերի՝ էլեկտրոէներգիայի, նավթամթերքների և ածխի արդյունաբերության ասպարեզում Ռուսաստանն առաջավոր կապիտալիստական երկրների համեմատությամբ կանդնած էր վերջին տեղում: Եղած ինդուստրիայի կարևորագույն ճյուղերը — մետաղագործական արդյունաբերության 72 տոկոսը, քարածխի արդյունաբերության 75 տոկոսը, նավթարդյունաբերության 70 տոկոսը — գտնվում էր անգլիական, ֆրանսիական, բելգիական և արտասահմանյան այլ կապիտալիստական երկրների ձեռքին: Ցարական Ռուսաստանը հանդիսանում էր այդ երկրների կիսագաղութը:

Էլ ավելի վատ էր գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը: Տրակտորների և ժամանակակից գյուղմեքենաների մասին խոսելն ավելորդ էր: Նրանք չկային Ռուսաստանում: Գյուղատնտեսության տեխնիկական բազան 1910 թվի տվյալներով հանդիսանում էր՝ արսր և չուխ — 7,8 միլիոն հատ, փայտյա գութաններ — 2,2 միլիոն հատ, երկաթե գութաններ — 4,2 միլիոն հատ, փայտյա փոցխեր — 17,7 միլիոն հատ: Գյուղատնտեսության մեջ գերիշխում էր եռագաշտը: Բերքատվության տեսակետից

Ռուսաստանը դրավում էր վերջին տեղերից մեկը մյուս կապիտալիստական երկրների համեմատությամբ. ցորենի բերքատվության տեսակետից՝ 16-րդ տեղը, տարեկանի տեսակետից՝ 10-րդ տեղը և այլն:

Տեխնիկա-տնտեսական այսպիսի հետամնացությունը դուրդովում էր երկրի ընդհանուր աղքատության հետ: Մասսաները զտնվում էին ծայր աստիճան հետամնաց և աղքատ վիճակում: Ցարական Ռուսաստանը հանդիսանում էր ժողովուրդների բանտ, ինքնիշխանության և կամայականության մի երկիր, որտեղ ըստ Գերցենի արտահայտության՝ «Սմեն մի մասնավոր պրիստավ չթագադրված միապետ էր, իսկ միապետը—թագադրված ժանդարմ»: Անասելի վատ էր բանվորների կացությունը Ռուսաստանում: 1912 թվականին բանվորները նկարագրելով իրենց և կապիտալիստների վիճակը, բոլշևիկյան «Զվեզդա»-ում գրում էին. «Կանցնի մի տարի և ահա կապիտալիստի մոտ մի նոր ծալք ևս կավելանա նրա ճարպոտ շլինքին կշտությունից և իր ուժի մեջ ունեցած վստահությունից, իսկ բանվորի մոտ նոր կնճիռ կավելանա նրա երեսին՝ քաղցած կյանքից, վաղվա օրվա մասին եղած տագնապից»: Գյուղում իշխում էր աշխարհակեր կուլակը, աշխատավոր գյուղացիների վամպիրը: Ողջ գյուղացիական տնտեսություններից 65<sup>0</sup>/<sub>0</sub>-ը չքավորներ էին, 10—15 տոկոս կազմող կուլակները գերիշխում էին գյուղում:

«Գյուղացին հասցված էր կյանքի ուզվորական մակարդակի,—ասում էր Լենինը,—նա իր անասունների հետ էր ապրում, ցնցոտի հագնում, թելուկով կերակրվում... Գյուղացիները խրոնիկական սով էին ապրում և տասնյակ հազարներով մեռնում սովից ու ավելի ու ավելի հաճախ կրկնվող անբերությունների ժամանակ ծագող համաճարակներից»: (Լենին: Երկեր, հատոր 4-րդ, էջ 545, հայերեն հրատարակություն):

Պարզ է, որ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման այդպիսի հետամնաց բազայի վրա չէր կարելի սոցիալիզմ կառուցել: Սոցիալիզմը դա ինդուստրիայի, գյուղատնտեսության կոլեկտիվացման և մեքենայացման—արտադրողական ուժերի բարձր զարգացման բազայի վրա հիմնված տնտեսակարգ է:

Սոցիալիստական ուղուցիայից անմիջապես հետո

ՍՍՌՄ-ում պրոլետարիատի խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի նա օգտագործելով պրոլետարիատի դիկտատուրան՝ որպես վճռական քաղաքական ֆակտորի — մինչև վերջը լիկվիդացնի միջնադարյան մնացորդները երկրում, դուրս բերի երկիրը տեխնիկական և տնտեսական հետամնացությունից, ամբողջ վճռականութեամբ առաջ մղի: ՍՍՌՄ-ի սոցիալիստական ինդուստրացիան գործը, որպես սոցիալիզմի կառուցման տնտեսական բաղաչի: Քաղաքական իշխանությունը պրոլետարիատի, ձեռքին և նրատրամադրութեան տակ եղած տնտեսական հրամանատարական բարձունքները հնարավորություն էին տալիս նրան լիովին իրագործելու այդ խնդիրները:

Սկսված քաղաքացիական կռիվները ժամանակավորապես հետաձգեցին այդ խնդիրների իրագործումը: Նրեք տարի տևող քաղաքացիական կռիվները էլ ավելի քայքայեցին առանց այն էլ իմպերիալիստական պատերազմի ընթացքում քայքայված երկրի տնտեսական կյանքը և մասնավորապես արդյունաբերությունը: Խոշոր արդյունաբերութեան արտադրանքը 1920 թվականին 7 անգամ պակաս էր նախապատերազմյան մակարդակից: Գյուղատնտեսութեան արտադրանքը նախապատերազմյանի 50 տոկոսն էր կազմում միայն: Բանվոր դասակարգը — երկրի արտադրողական ուժերի գլխավոր ֆակտորը, ջրված էր ամբողջ երկրով մեկ, զրազված էր տնայնագործութեամբ և վառիչներ պատրաստելով: Նա ապաստարանավորվում էր: Պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային բազան սկսեց թուլանալ:

Միակ ելքը այդ դրությունից՝ դա երկրի տնտեսական կյանքի վերականգնումն էր և նախ և առաջ երկրի արդյունաբերութեան վերականգնումը, նրա ինդուստրացումը:

Եվ ինչն էր անգամ ամբողջ օրութեամբ դնում է երկրի սոցիալիստական ինդուստրացիան հարցը:

«Ռուսաստանի համար, — ասում է ինչն էր, — փրկությունը ոչ միայն գյուղացիական տնտեսութեան լավ բերքն է — այդ դեռ քիչ է — և ոչ միայն գյուղացիութեանը սպառման առարկաներ մատակարարող թեթև արդյունաբերութեան լավ կացությունը — այդ էլ դեռ քիչ է — մեզ անհրաժեշտ է նաև ծանր ինդուստրիա... առանց ծանր արդյունաբերութեանը փրկելու, առանց այն վերականգնելու մենք ոչ մի արդյունաբերութեան չենք կարող կառուցել, իսկ

առանց նրան մենք առհասարակ կկործանվենք որպես ինքնու-  
րույն երկիր... Ծանր արդյունաբերությունը պետական նպաստ-  
ների կարիք ունի: Եթե մենք այդ նպաստները չգտնենք, ապա  
մենք որպես քաղաքակիրթ պետություն — էլ ես չեմ ասում որ-  
պես սոցիալիստական պետություն — կորած ենք»: (Լենին, Երկեր,  
հատոր 27-րդ, էջ 349):

Ահա թե ինչու դեռևս քաղաքացիական կռիվները չվեր-  
ջացած, 1920 թվի դարնանը, Լենինը ձեռնամուխ է լինում մեր  
երկրի ինդուստրացիան վիթխարի ծրագրի մշակմանը — Գոելոու-ի  
պլանի մշակմանը: Այդ պլանը նախատեսում էր 10 — 15 տարվա  
ընթացքում հսկայական չափով դարգացնել մեր երկրի ածխի,  
երկաթահանքի, նավթի, տորֆի, չուգունի, ալումինի, պողպա-  
տի, էլեկտրիֆիկացիայի և դյուղատնտեսության դարգացումը:  
Դա մեր երկրի սոցիալիստական ինդուստրացիան լենինյան  
առաջին պլանն էր: Թե ինչպիսի նշանակություն էր տալիս Լե-  
նինն այդ պլանին, դա երևում է նրա խոսքերից. «Իմ կարծի-  
քով այս — մեր պարտիայի երկրորդ ծրագիրն է... Կամունիզմը —  
Սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրի-  
ֆիկացիան: Այլ կերպ երկիրը մնում է մանր դյուղացիական և  
հարկավոր է, որ մենք այդ պարզ գիտակցենք... Միայն այն ժա-  
մանակ, երբ երկիրն էլեկտրիֆիկացվի, երբ արդյունաբերու-  
թյունը, դյուղատնտեսությունը և տրանսպորտը կգրվեն ժամա-  
նակակից խոշոր արդյունաբերության տեխնիկական բազայի  
վրա, միայն այն ժամանակ մենք կհաղթանակենք վերջնականապես»  
(Լենին, Երկեր, հատ. 26, էջ 45 — 47: Ընդգծումներն իմն են: Օ. Ն.):

Գոելոու-ի պլանն ամենաջերմ պաշտպանություն և ամենա-  
բարձր գնահատական ստացավ ընկեր Ստալինի կողմից: Կար-  
գալով այն, ընկեր Ստալինը գրում էր Լենինին. — «Հիանալի, լավ  
կազմված գիրք է: Առանց չափերտների իսկապես միաբնական և  
իսկապես պետական-տնտեսական պլանի վարպետորեն կազմված  
ուրվագի՞ծ...»

Իմ կարծիքն է՝

1. Այլևս ոչ մի բոսպե չկորցնել պլանի մասին շաղակրատե-  
լու վրա.

2. Սկսել գործի անհապաղ պրակտիկ ձեռնարկումը:

3. Այդ ձեռնարկման շահերին ենթարկել մեր աշխատանքի

առնվազն 1/3-ը, (2/3-ը «ընթացիկ» կարիքների վրա կգնա)...  
(Ի. Ստալին, Երկեր, հատոր 5, էջ 55, 56 հայ. հրատ.):

Այսպես էր մարքսիզմի երկու հանճարների միասնական  
կարծիքը երկրի տնտեսական կյանքի զարգացման, ինչպես և  
ուսուցիչայի բոլոր հարցերում:

Դաժան մահը հնարավորութունն չտվեց Լենինին կենսա-  
գործելու երկրի ինդուստրացման պլանը, ավարտելու սո-  
ցիալիզմի կառուցումը մեր երկրում: Այդ գործը վիճակվեց  
ընկեր Ստալինին:

### ՄԵՐ ԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՊԼԱՆԸ

1924—25 թվականներին Սովետական Միությունը մոտենում  
էր տնտեսության վերականգնման շրջանի ավարտմանը: Խոշոր  
արդյունաբերությունն արդեն 1925 թվականին տալիս էր նախա-  
պատերազմյան արդյունաբերության արտադրանքի երեք քա-  
ռորդը: Դյուղատնտեսության արտադրանքը նախապատերազ-  
մյանի 87 տոկոսին էր հասել: Այսպիսով, ողջ ժողովրդական տըն-  
տեսությունը մոտենում էր վերականգնման շրջանի ավարտ-  
մանը: Սակայն կարո՞ղ էր արդյոք մեզ բավարարել նախապա-  
տերազմյան մակարդակը: Կարո՞ղ էինք մենք արդյոք իրագործել  
սոցիալիզմի կառուցումը մեր երկրում այդ մակարդակի վրա:  
Պարզ է, որ ոչ, քանի որ նախապատերազմյան մակարդակը, ինչ-  
պես մատնանշեցինք վերևում, հետամնաց երկրի մակարդակ էր:

Այստեղից, ամբողջ հասակով մեր առաջ ծառայավ երկրի  
տնտեսական շինարարության հեռանկարների, բնույթի հարցը,  
Սովետական Միության մեջ սոցիալիզմի կառուցման բախտի  
հարցը: «Ինչ ուղղությամբ պետք է վարել տնտեսական շինար-  
արությունը Սովետական Միության մեջ, սոցիալիզմի ուղղու-  
թյամբ, թե՞ մի որևէ այլ ուղղությամբ: Արդյոք պե՞տք է և կա-  
րո՞ղ ենք մենք սոցիալիստական տնտեսություն կառուցել, թե՞  
մեզ վիճակված է հողը պարարտացնել ուրիշ, կապիտալիստա-  
կան տնտեսության համար: Ընդհանրապես հնարավո՞ր է արդյոք  
ՍՍՌՄ-ում սոցիալիստական տնտեսություն կառուցել, իսկ եթե  
հնարավոր է, ապա հնարավո՞ր է արդյոք այդ տնտեսությունը  
կառուցել՝ կապիտալիստական երկրներում ուսուցիչան ձգձգվե-

չու և կապիտալիզմի ստարիլիզացիայի պայմաններում... Ինչպե՞ս  
պետք է կառուցել սոցիալիստական ժողովրդական տնտեսությու-  
նը, ո՞ր ծայրից պետք է սկսել այդ շինարարությունը»։ (Համկ(բ)Պ  
պատմության համառոտ դասընթաց, էջ 373, Երևան, 1946 թ.):

Ընկեր Ստալինն այս բոլոր հարցերին տվեց իրեն հատուկ  
պարզ, սրոշակի և ուղղակի պատասխան: Այն, ասում էր նա,  
մենք ունենք այն բոլորը, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիա-  
լիստական հասարակարգ կառուցելու համար մեր երկրում: Այդ  
հարցը թեորետիկորեն վաղուց էր վճռված մեր պարտիայի կող-  
մից, Լենինի և Ստալինի կողմից: Այժմ, ժողովրդական տնտե-  
սության վերականգնման շրջանի վերջում այս հարցը դրվում է  
որպես պրակտիկ հարց, որպես օրվա հսկող խնդիր: Եվ Լենինյան  
այդ մեծ ստեղծագործողը ամբողջ ֆրոնտով մեկ պայքար ծա-  
վալելով ժողովրդի թշնամիների դեմ, մշակում է սոցիալիզմի  
կառուցման կռիվներտ պլանը, ցույց է տալիս այդ հարցի լուծման  
ուղիները, մորիլիզացնում պարտիան, բանվոր դասակարգը, աշ-  
խատավոր գյուղացիությունը սոցիալիզմի կառուցման համար  
մղվելիք պայքարում: 1917 թվի հոկտեմբերին մենք հաղթեցինք  
կապիտալիզմին Բաղաճականապես: Այժմ մենք նրան պետք է  
հաղթեինք նաև տնտեսապես—այդպես էր դրված հարցը:

Սակայն ինչի՞ց պետք էր սկսել սոցիալիզմի կառուցումը մեր  
երկրում, ո՞րն էր այն բանալին, որի օգնությամբ մենք պետք է  
ձեռնարկեինք համաշխարհային պատմական նշանակություն ու-  
նեցող այդ վիթխարի գործի կենսագործումը:

Երկրի սոցիալիստական ինդուստրացումը—ահա այն գլխա-  
վոր օղակը, որից ամուր բռնած մենք պետք է սկսեինք սոցիա-  
լիզմի կառուցումը մեր երկրում: Ոչ պրոլետարական ուսու-  
ցիայի ձգձգումը Արևմուտքում, ոչ կապիտալիզմի մասնակի  
ստարիլիզացիան կապիտալիստական երկրներում, ոչ տրոցկիզմի  
վայրահաչոցը, ոչ մի բան չէին կարող կանգնեցնել մեր շար-  
ժումը դեպի առաջ—դեպի սոցիալիզմը: Այսպես էր դրված հարցը  
մեր առաջ պատմության կողմից:

Իսկ ի՞նչ է նշանակում երկրի ինդուստրացումը, նշանա-  
կում է այն արդյոք արդյունաբերության զարգացումը ընդհան-  
րապես:

«Մի քանի ընկերներ կարծում են, թե ինդուստրացումն

ընդհանրապես ամեն մի արդյունաբերութեան զարգացումն է: Կան նույնիսկ այնպիսի տխմարներ, որոնք գտնուում են, թե ղեռ Իվան Ահեղը, որը մի ժամանակ արդյունաբերութեան որոշ սաղմ էր ստեղծում, ինդուստրիալիստ էր: Եթե այդ ուղիով ընթանանք, ապա Պյոտր Մեծին պետք է առաջին ինդուստրիալիստն անվանենք: Այդ, իհարկե, սխալ է: Արդյունաբերութեան ամեն մի զարգացում ինդուստրացում չէ: Ինդուստրացման կենտրոնը, նրա հիմքը ծանր արդյունաբերութեան զարգացումն է (վառելիք, մետաղ և այլն), վերջիվերջս, արտադրութեան միջոցների արտադրութեան զարգացումն է, իր սեփական մեքենաշինութեան զարգացումն է»: (Ի. Ստալին, Երկեր, հատար 8-րդ, էջ 136—137, հայ. հրատ.):

Այս բոլորից բխում է, որ մեր երկրի ինդուստրացումը չէր սպառվում արդյունաբերութեան զարգացմամբ ընդհանրապես: Ինդուստրացումը—այդ նշանակում է չուգունի, պողպատի, ածուխի, նավթի արտադրութեան զարգացումը, ավտոմոբիլային արդյունաբերութեան, հաստոցային և ամեն կարգի մեքենաշինութեան զարգացումը, ավիացիայի, տրակտորների, շոգեքարշերի արտադրութեան զարգացումը, ժամանակակից քիմիական արդյունաբերութեան զարգացումը, նշանակում է արտադրութեան միջոցների արտադրութեան զարգացումն ընդհանրապես:

\* \* \*

Երկրի ինդուստրացման հարցը իր ամբողջ ծավալով քնննութեան առնվեց պարտիայի 14-րդ համագումարում, 1925 թ., մի համագումար, որը սոցիալիզմի կառուցման պատմութեան մեջ է մտել որպես ինդուստրացման համագումար:

Համագումարը շրջադարձային կետ հանդիսացավ ՍՍՌՄ-ի կյանքում: Այդ շրջադարձն իրագործվում էր մեծ Ստալինի կողմից, նրա անմիջական ղեկավարութեամբ: Համագումարում տրված իր փայլուն զեկուցման մեջ ընկեր Ստալինը ամենայն վրճառականութեամբ և հետևողականութեամբ առաջ քաշեց մեր երկրի զարգացման գլխավոր գծի հարցը—երկրի ինդուստրացման հարցը:

«Մեր երկիրն ազրարայինից վերածել իր սեփական ուժերով անհրաժեշտ սարքավորում արտադրելու ընդունակ ինդուստրիալ երկրի, — ահա թե որն է մեր գլխավոր գծի էությունը, հիմքը: Գործը մենք պետք է այնպես կազմակերպենք, որ տրնտեսավարների մտքերն ու ձգտումներն ուղղված լինեն հատկապես դեպի այդ կողմը, մեր երկիրը սարքավորում ներմուծող երկրից՝ սարքավորում արտադրող երկիր դարձնելու կողմը: Որովհետև այդ է մեր երկրի տնտեսական ինքնուրույնության հիմնական երաշխիքը: Որովհետև այդ է երաշխիքը, որ մեր երկիրը չի դառնա կապիտալիստական երկրների կցորդը»: (Ստալին, ՀամԿ(Բ)Պ քաղաքական հաշվետվությունը 14-րդ համագումարին, Երկեր, հատոր 7, էջ 392—393, հայ. հրատ.):

Տրոցկիստները համագումարում գրոհ կազմակերպեցին պարտիայի գլխավոր գծի դեմ, առաջ քաշելով երկրի զարգացման հեռանկարների իրենց «գլխավոր գիծը» — մեր երկրի ազրարացման գիծը: Այդ գծի էությունն այն էր, որ ՍՍՌՄ-ն պետք է արտահաներ գյուղատնտեսական պրոդուկցիա և դրա փոխարեն ներմուծեր արդյունաբերական սարքավորում: Տրոցկիստների առաջ քաշած այդ գիծը, որը մեր երկիրն իմպերիալիստական երկրների գաղութ դարձնելու գիծ էր նշանակում, մինչև վերջ մերկացվեց ընկեր Ստալինի կողմից՝ համագումարում: Ընկեր Ստալինը մատնանշում էր, որ տրոցկիստական քաղաքականությունը երկրի զարգացման հեռանկարների հարցում — դա մեր երկրի դառնասացման<sup>1</sup> քաղաքականությունն է:

«Սրանից ի՞նչ է հետևում: Սրանից հետևում է այն, — ասում էր ընկեր Ստալինը, — որ Գերմանիան մեզ տալու է սարքավորում, մենք ներմուծելու ենք այն, իսկ արտահանելու ենք գյուղատրն-

<sup>1</sup> Դառնասր — ամերիկյան Ֆինանսիստ էր, որն առաջարկում էր հետևել այլը, որպեսզի Գերմանիան կարողանա վճարել իր ռեպարացիոն գումարները Անտանտայի պետություններին — Անգլիային և Ֆրանսիային, իսկ այս վերջիններս էլ վճարեն իրենց պարտքերը ԱՄՆ-ին, ապա պետք է զարգացնել Գերմանիայի ինդուստրիան ԱՄՆ-ի վարկավորման օգնությամբ: Սակայն հարց է առաջ գալիս, թե որտե՞ղ պետք է վաճառի իր արդյունաբերության պրոդուկցիան Գերմանիան, որտեղի՞ց նա պետք է շուկա գտնի: Ո՛չ Անգլիան, ոչ Ֆրանսիան և ոչ էլ ԱՄՆ չէին զիջելու իրենց շուկաները Գերմանիային: Այդպիսի շուկա ըստ Դառնասի պետք է հանդիսանար Սովետական Միությունը:

տեսական մթերքներ: Մենք, այսինչն՝ մեր արդյունաբերությունը, այսպիսով՝ կգտնվենք Եվրոպայի կողմից շղթայված վիճակում: Գառնեսի պլանի հիմքն էլ հենց այդ է: (Ի. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 392, հայ. հրատ.):

Ստացվում է մի ընդհանուր միասնական ճակատ ամերիկյան իմպերիալիզմից մինչև տրոցկիզմը ուղղված՝ ՍՍՌՄ-ի անկախության դեմ:

Պարտիայի 14-րդ համագումարում ընկեր Ստալինը մատնանշում էր երկրի տնտեսական զարգացման երկու գլխավոր գիծ: Առաջինը մեր պարտիայի, ստալինյան գլխավոր գիծն էր. որն ուղղում էր մեր երկիրը դեպի նրա ինդուստրիալ զարգացումը, դեպի ՍՍՌՄ-ի անկախությունն ու ինքնուրույնությունը, դեպի սոցիալիզմի հաղթական կառուցումը: Մյուս գիծը — դա տրոցկիստների գիծն էր, որը ձգտում էր ուղղել մեր երկրի զարգացումը դառնեսացման ուղիով, ՍՍՌՄ-ն իմպերիալիստական երկրներին կցորդ դարձնելու ուղիով: Դա մեր երկրի կապիտուլյացիայի և սոցիալիզմի հաղթանակի ժխտման գիծն էր: Տրոցկիստների-գիծովեականների այդ դավաճանական գիծը ամբողջովին մերկացվեց ընկեր Ստալինի կողմից պարտիայի 14-րդ համագումարում: Պարզ է, որ առանց տրոցկիզմը գլխովին ջախջախելու պարտիան չէր կարող առաջ տանել երկրի ինդուստրացման գործը: Տրոցկիզմի, ինչպես և մյուս հակալենինյան խմբավորումների ջախջախումը դա մեր երկրի ինդուստրացման անհրաժեշտ պայմանն էր:

Մեր երկրի ինդուստրացման մասին պարտիայի 14-րդ համագումարում ընդունված ստալինյան գլխավոր գիծը դարձավ հետագա մեր ողջ տնտեսական շինարարության հիմքը, ՍՍՌՄ-ի զարգացման լեյտամոտիվը:

### ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ՏԵՄՊԵՐԻ ՄԱՍԻՆ

Սակայն պատմությունը մեր առաջ մի այլ հարց էլ էր դրել: Մենք ոչ միայն պետք է իրագործեինք մեր երկրի ինդուստրացումը, այլև այն պետք է իրագործեինք պատմական զարգացման տեսակետից միևիմայ ժամանակաշրջանում, մենք պետք է առաջ շարժվեինք յոթմղոնյան քայլերով:

Այստեղից՝ մեր առաջ դրված էր ինդուստրիայի զարգացման

բարձր տեմպերի խնդիրը: Պարտիայի 15-րդ կոնֆերանսը, որը գումարվեց 14-րդ համագումարից մեկ տարի հետո, որոշակիորեն ընդդժում էր երկրի ինդուստրիալ զարգացման տեմպի հարցը: «Անհրաժեշտ է ձգտել այն բանին, որպեսզի սլառամական համեմատարար կարճ ժամանակաշրջանում հասնել և ապա գերազանցել առաջավոր կապիտալիստական երկրների ինդուստրիալ զարգացման մակարդակը» — ասված է կոնֆերանսի բանաձևում: (Տես «ВКП(б) в резолюциях», ч. II. стр. 131, 1936 г.).

Հետագայում, 1931 թվին, անդրադառնալով երկրի ինդուստրացման տեմպերի հարցին, ընկեր Ստալինը «Տնտեսավարների խնդիրների մասին» արտասանած իր ճառում մերկացնելով այս անգամ աջ ուստավրատորներին, մատնանշում էր.

«Առաջավոր երկրներից մենք հեռ ենք մնացել 50—100 տարով: Այդ տարածութունը մենք պետք է կտրենք-անցնենք 10 տարում: Կամ մենք այդ բանը կանենք, կամ մեզ կճգմեն...»: «Կամ մահ, կամ հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր երկրներից» — հիշեցնում էր ընկեր Ստալինը Լենինի խոսքերը, արտասանած Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախօրյակին: (Ի. Ստալին, Լենինի դժի հարցերը, էջ 403, Երևան, 1940 թ.):

Այսպես էր զրված հարցը:

Ինչո՞վ էր թելադրվում երկրի ինդուստրացման այդպիսի արագ տեմպերի անհրաժեշտութունը: Այն թելադրվում էր մի շարք պայմաններով՝ ինչպես արտաքին, նույնպես ներքին կարգի, մատնանշում էր ընկեր Ստալինը:

Արտաքին կարգի պայմանները: Պրոլետարիատն իշխանության գլուխ էր բարձրացել գեոևս մեկ երկրում և այն էլ այնպիսի երկրում, որն իր տեխնիկական-տնտեսական զարգացման մակարդակով չափազանց հեռ էր մնացել մյուս առաջավոր կապիտալիստական երկրներից, որտեղ տեխնիկան, — ինչպես մատնանշում էր ընկեր Ստալինը, — ոչ թե առաջ է գնում, այլ ուղղակի վազում է:

«Եվ անա ստացվում է, որ, մի կողմից, մենք ունենք մեր երկրում ամենաառաջավոր իշխանությունն ամբողջ աշխարհում, Սովետական իշխանություն, մյուս կողմից մենք ունենք արդյունարեբական ծայր աստիճան հետամնաց տեխնիկա, որը ներկայացնում է սոցիալիզմի և Սովետական իշխանության բազան:

Մտածո՞ւմ եք դուք, որ կարելի է սոցիալիզմի վերջնական հաղթանակին հասնել այդ հակասության առկայության պայմաններում: (Ստալին: Տես՝ Լենին և Ստալին, Երկերի ժողովածու Երեք հատորում, հատոր 3-րդ, էջ 315):

Երկրի ինդուստրացման զարգացման բարձր տեմպ— ահա թե ինչով մենք կկարողանանք լուծել այդ հակասությունը:

Անկասկած կարելի էր երկրի ինդուստրացման ավելի դանդաղ տեմպ վերցնել, եթե մենք ունենայինք զարգացման հասած այնպիսի տեխնիկա, ինչպիսին, ասենք, Գերմանիան ունէր: «Այդ պայմանի դեպքում մենք կկարողանայինք զարգացնել ինդուստրիան ավելի նվաղ տեմպով, չվախճնալով հետ մնալ կապիտալիստական երկրներից և դիտենալով, որ մենք մի հարվածով կարող ենք անցնել նրանց» (Նույն տեղը, էջ 317): Կարելի էր նույնպես ավելի դանդաղ տեմպ վերցնել նաև այն դեպքում, եթե մեր երկիրը, միակ Սովետական երկիրը չլիներ՝ շրջապատված կապիտալիստական երկրներով, եթե Սովետական Միության կողքին լիներ, ասենք, սովետական Գերմանիա, կամ սովետական Անգլիա: Այն ժամանակ նույնպես կարիք չէր լինի այդպիսի արագացրած տեմպերով առաջ գնալ: «Այդ պայմանի դեպքում կապիտալիստական շրջապատը չէր կարող մեզ համար ներկայանալ այն լուրջ վտանգը, որպիսին նա ներկայացնում է այժմ...»: (Նույն տեղը, էջ 317: Ընդգծումներն ընկեր Ստալինինն են):

Դժբախտարար այս պայմաններից և ոչ մեկը մեզ համար գոյություն չունեն: Մենք որպես միակ Սովետական երկիր շրջապատված էինք կապիտալիստական երկրներով, որոնք թշնամարար էին տրամադրված դեպի մեզ, որոնք երազում էին մեզ հոշոտելու մասին: Կասեցնել տեմպերը, ինչպես առաջարկում էին բուխարինականները, դա նշանակում էր հետ մնալ: Բսկ չէ որ հետ մնացածներին հարվածում են:

«Բայց մենք չենք ուզում հարվածված լինել: Ո՛չ, չենք ուզում: Հին Ռուսաստանի պատմության էությունն, ի միջի այլոց, այն էր, որ նրան հետամնացության համար անդադար հարվածում էին: Հարվածում էին մոնղոլական խաները: Հարվածում էին թուրքական բեգերը: Հարվածում էին շվեդական Ֆեոդալները: Հարվածում էին լեհ-լիտվական պաները: Հարվածում էին անգլո-ֆրանսիական կապիտալիստները: Հարվածում էին

ճապրոնական բարոնները: Բոլորը հարվածում էին հետամնացութ-  
թյան համար... Հիշեցեք մինչուևուցիտն բանաստեղծի խոսքե-  
րը— «Դու և՛ աղքատ ես, դու և՛ լիառատ ես, դու և՛ հղոր ես, դու  
և՛ անղոր ես, մայր Ռուսիա»: Հին բանաստեղծի այս խոսքերը լավ  
էին սերտել այդ պարոնները: Նրանք հարվածում ու ավելաց-  
նում էին՝ «դու լիառատ ես», հեռեապես քո հաշվին կարելի է  
շահվել: Նրանք հարվածում էին ու ավելացնում. «դու աղքատ  
ես, անղոր ես», հետևարար քեզ կարելի է անպատիժ հարվածել ու  
կողոպտել: Արդեն այս է շահագործողների օրենքը— հարվածել հե-  
տամնացներին ու թուլյներին: Կապիտալիզմի գայլային օրենքը»:  
(Ի. Ստալին, Լենինի դժի հարցերը, էջ 402, 1940 թ., Երևան):

Արտաքին պայմանների տեսակետից մեր երկրի ինդուստ-  
րացման արագ տեմպի անհրաժեշտությունն ունենր նաև մի այլ  
կարևոր նշանակություն: Դա ազիտացիոն և պրակտիկ այն մեծ  
նշանակությունն էր, որը պետք է ունենար նա ուևուցիտն շար-  
ժումն ամբողջ աշխարհում դարգացնելու համար, «որովհետև ի՞նչ  
բան է պրոլետարիատի դիկտատուրայի օրով մետաղարդյունա-  
բերության բուռն աճումը, եթե ոչ մի ուղղակի ապացույց, որ  
պրոլետարիատն ընդունակ է ոչ միայն քանդելու հինը, այլև  
կառուցելու նորը, որ նա ընդունակ է իր սեփական ուժերով  
կառուցելու նոր արդյունաբերություն և մարդու կողմից մար-  
դու շահագործումից ազատ նոր հասարակություն»: (Ի. Վ.  
Ստալին, Երկեր, հատոր 7, էջ 144, հայ. հրատ.): ՍՍՌՄ-ի  
բանվոր դասակարգի միջազգային պարտավորության այս կա-  
րևորագույն կողմը մենք երբեք չենք կարող մոռանալ: «Այժմ,—  
ասում էր Լենինը,— միջազգային ուևուցիտայի վրա մենք մեր  
գլխավոր ներգործությունն անում ենք մեր տնտեսական քա-  
ղաքականությամբ»: (Լենին, Երկեր, հատոր XXVI, էջ 410: Ընդ-  
գծումն իմն է: Օ. Հ.):

Ահա թե արտաքին ինչպիսի պայմաններ էին թելադրում  
մեզ իրագործելու երկրի ինդուստրացումը արագ տեմպերով:

Ներքին պայմանները: Պրոլետարական ուևուցիտան հաղ-  
թանակել էր ոչ միայն մեկ երկրում, այլև այնպիսի երկրում,  
որտեղ գերակշռում էր մանր ապրանքային դյուղացիական տըն-  
տեսություն, հենված միջնադարյան պապենական տեխնիկայի  
վրա: Պրոլետարական ուևուցիտայից հետո այդ տնտեսություն-

II  
A 7346  
15.9.54



ների թիվը 24—25 միլիոն էր կազմում: Տեխնիկայես հետամը-  
 նաց մանր դյուղացիական տնտեսությունների այդ օվկիանո-  
 սում,— ինչպես մատնանշում էր ընկեր Ստալինը,— սոցիալիստա-  
 տական արդյունաբերությունը ներկայացնում էր որպես առան-  
 ձին կղզիներ: Կարո՞ղ էր արդյոք ինդուստրիայի արագ զարգա-  
 ցում տեղի ունենալ մեր երկրում գյուղացիության այդպիսի  
 ծայր աստիճան հետամնացության պայմաններում: Չպետք է  
 մոռանալ երբեք, որ «... եթե ինդուստրիան հանդիսանում է  
 առաջատար սկիզբը, ապա գյուղատնտեսությունը հանդիսանում  
 է ինդուստրիայի զարգացման բազան և որպես շուկա, որը կլա-  
 նում է ինդուստրիայի պրոդուկցիան, և որպես հումք և պարե-  
 նավորում մատակարարող...» (Ստալին: Տես Լենին և Ստալին,  
 Երկերի ժողովածու երեք հատորում, հատոր երրորդ, էջ 318):  
 Այստեղից, որպեսզի արագ թափով առաջ գնար ինդուստրիայի  
 զարգացումը, անհրաժեշտ էր վերակառուցման ենթարկել գյուղա-  
 տնտեսությունը, որպես ինդուստրիայի զարգացման բազա: Բայց  
 գյուղի վերակառուցումը նոր տեխնիկական բազայի վրա կրկին  
 անգամ դեմ էր առնում մեր երկրի ինդուստրացման պրոբլեմին,  
 որովհետև միայն ինդուստրիայի զարգացման վրա կարելի է տեխ-  
 նիկական վերակառուցման ենթարկել գյուղատնտեսությունը:

Չի կարելի տևական երկար ժամանակով,— մատնանշում էր  
 ընկեր Ստալինը,— Սովետական իշխանությունը և սոցիալիստա-  
 կան շինարարությունը խարսխել երկու տարբեր բազաների վրա,  
 մի կողմից՝ խոշոր միավորման ենթարկված սոցիալիստական  
 արդյունաբերության վրա, որտեղ չկա կապիտալիզմ և այն չի  
 կարող ծնունդ առնել, մյուս կողմից՝ մանր, գաճաճային գյու-  
 ղացիական ապրանքային տնտեսությունների վրա, որոնք ծնում  
 են կապիտալիզմ ամեն օր և ամեն ժամ մասսայական մասշտա-  
 բով: «Քանի մենք ապրում ենք մանր գյուղացիական երկրում,—  
 ասում էր Լենինը,— կապիտալիզմի համար Ռուսաստանում ավե-  
 լի ամուր տնտեսական բազա կա, քան թե կոմունիզմի համար»:  
 (Լենին: Երկեր, հատոր 26, էջ 46):

Ո՞րն էր այս հակասությանից դուրս գալու ելքը: Դա մեր  
 երկրի ինդուստրացումն էր, նրա զարգացման արագ տեմպը: «Նթե  
 էլեկտրիֆիկացիան լինի 10—20 տարուց հետո,— ասում էր Լենի-  
 նը,— մի կաթիլ անգամ սարսափելի չէ մանր հողագործի ինդի-

վիդուալիզմը... Եթե էլեկտրիֆիկացիա չլինի, ապա միևնույնն է անխուսափելի է վերադարձը դեպի կապիտալիզմը»։ (Լենին, Երկեր, հ. 26, էջ 313)։ Ահա թե ինչպես էր դրված խնդիրը և ինչու մենք պետք է արագ թափով ինդուստրացման ենթարկեինք մեր երկիրը։

Այսպիսով, երկրի ինդուստրացման և նրա արագ տեմպը նշանակում էր. ա) Լուծել մեր երկրի ամենատառաջավոր քաղաքական կառուցվածքի և էկոնոմիկայի հետամնացության միջև եղած հակասությունը, բարձրացնել մեր երկրի էկոնոմիկան մինչև նրա քաղաքական կառուցվածքի բարձր մակարդակը, ապահովել մեր երկրի անկախությունը, ամրապնդել նրա սոցիալանունակությունը. բ) Լուծել խոշոր միավորման ենթարկված սոցիալիստական արդյունաբերության և մանր գյուղացիական, ապրանքային տնտեսության միջև եղած հակասությունը, ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա, միացնել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ որպես մի ամբողջական տնտեսության, դրանով իսկ լիկվիդացնել կապիտալիզմի դարգացման հնարավորությունները երկրում։ Լուծելով այս երկու պատմական խնդիրները, նշանակում էր կառուցել սոցիալիստական հասարակարգ մեր երկրում։ Սովետական Միությունը միջազգային պրոլետարական ռևոլյուցիայի վրա կատարվող իր գլխավոր ազդեցությունը կտեղափոխեր տնտեսական շինարարության ֆրոնտ։ Մեր հաջողությունները սոցիալիզմի կառուցման բնագավառում չէին կարող մոբիլիզացիայի չենթարկել միջազգային պրոլետարիատին ընդդեմ կապիտալիզմի։

Ահա թե ինչու ընկեր Ստալինն ամբողջ վճռականությամբ և հաստատակամությամբ առաջ էր մղում մեր երկրի ինդուստրացման գործը։

\* \* \*

Այն ժամանակ, երբ պարտիան ընկեր Ստալինի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էր տանում երկրի ինդուստրացումը և 1927 թ., պարտիայի 15-րդ համագումարում առաջ քաշեց գյուղի կոլեկտիվացիան հարցը, վճռական հարձակման անցավ կոլլապսի դեմ, հանդես եկավ աջերի խումբը։ Աջերը սոցիալանեկոլլապսի կոլլապսներին, դեմ դուրս եկան գյուղի կոլեկտիվացմանը և ձգտում էին վիժեցնել ինդուստրացման գործը։

Աջերը ուղղակի դեմ արտահայտվեցին Գնեպրոզէսի շինարարութեանը, պահանջելով միջոցները ծանր ինդուստրիայից փոխադրել թեթև արդյունաբերութեան մեջ:

Անհրաժեշտ էր մինչև վերջը մերկացնել և ջախջախել այս անգամ աջերին, և առաջ տանել մեր երկրի ինդուստրացման գործն արագացրած տեմպերով: Այդ բանը կատարեց մեր պարտիան ընկեր Ստալինի գլխավորութեամբ:

Առանց աջերի խմբակի ջախջախման մենք չէինք կարող իրագործել մեր երկրի ինդուստրացումը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, հետեապես և սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում:

### ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Երկրի վիթխարի ինդուստրացումը պահանջում էր հսկայական միջոցներ, հսկայական կապիտալ ներդրում: Ո՞րտեղից վերցնել այդ միջոցները: Ընկեր Ստալինը ցուցադրեց գլխավոր կապիտալիստական երկրների ինդուստրացման պատմութեանը, այդ երկրների ինդուստրացման աղբյուրներն ու մեթոդները: Նա ցույց տվեց Անգլիայի ինդուստրացման պատմութեանը: Անգլիայի ինդուստրացումն իրագործվել էր հարյուր միլիոնավոր զաղութային ժողովրդի հաշվին, նրանց կեղեքման, շահագործման, ոչ համարժեք փոխանակութեան, ուղղակի թալանի հաշվին: Գաղութներից ստացված հսկայական այդ կապիտալները — որպես առատութեան եղջուրից թափված բարիքներ, ստեղծեցին Անգլիայի ինդուստրիան: Ընկեր Ստալինը մատնանշեց Գերմանիայի ինդուստրացման պատմութեանը: Գերմանիայի ինդուստրացման գործում վճռական նշանակութեան ունեցաւ Ֆրանս-պրուսական պատերազմից հետո Գերմանիայի՝ Ֆրանսիայից ստացած 5 միլիարդանոց կոնտրիբուցիան: Հետեապես Գերմանիայի ինդուստրիան մեծ մասամբ ստեղծվել է Ֆրանսիական ժողովրդական մասսաների հաշվին: Ընկեր Ստալինը մատնանշեց, այնուհետև, ցարական Ռուսաստանի ձգտումները՝ մազլցելու դեպի ինդուստրիալ զարգացման ուղիները, օտարերկրյա կապիտալիստական երկրներից ստրկական պայմաններով փոխառութեաններ վերցնելու միջոցով: Այդ նույնպես երկիրը ինդուստրացման ենթարկելու

մի որոշ ուղի էր: Սակայն դա Ռուսաստանի ժողովրդական մաս-  
սաների ստրկացման դնով ձեռք բերվելիք ուղի էր, Ռուսաս-  
տանը կիսաազադութ դարձնելու ուղի: Վերջապէս ընկեր Ստալինը  
մատնանշեց ԱՄՆ-ի ինդուստրացման պատմությունը, մի հր-  
կիր, որի ինդուստրացումը տեղի ունեցավ մի կողմից՝ 30—40  
տարվա ընթացքում դրսից ներմուծվող փոխառությունների և  
երկարատե վարկերի միջոցով, մյուս կողմից՝ նրա շրջապատող  
երկրների ու կղզիների թալանի միջոցով:

Պարզ է, որ այս ուղիներից ոչ մեկը ընդունելի չէր մեզ  
համար: Այդ բոլորը երկրի ինդուստրացման կապիտալիստական  
ուղիներ ու կապիտալիստական մեթոդներ էին: Մենք իրազործե-  
լու էինք ինդուստրացման սոցիալիստական եղանակը մեր երկ-  
րում, սրը սկզբունքորեն տարբերվում է ինդուստրացման կապի-  
տալիստական եղանակից:

Այստեղից՝ ամբողջ հասակով մեկ մեր առաջ ծառայած  
ինդուստրացման միջոցների, նրա աղբյուրների հարցը: Անկաս-  
կած մենք չէինք հրաժարվում որոշ նպաստավոր պայմաններով  
փոխառություն վերցնելու կապիտալիստական երկրներից այդ  
նպատակի համար: Սակայն նրանք մերժեցին մեզ այդ բանում:  
Նրանք ոչ մի մտադրություն չունեին, և չէին էլ կարող ունե-  
նալ, օգնելու մեզ, մեր երկրի ինդուստրացման հարցում:

Ուրեմն ի՞նչ էր մնում մեզ անելու: Մեզ մնում էր մեր սե-  
փական միջոցներով, մեր հաշվին ինդուստրացման ենթար-  
կել երկիրը: Ունեինք մենք արդյոք այդ միջոցները: Այո, ու-  
նեինք: Այդ միջոցները, որոնք միանգամայն բեռնավոր միջոցներ  
էին, ցույց էր տալիս մեզ ընկեր Ստալինը: Դրանք սոցիալիս-  
տական կառավարման միջոցներն էին մեր երկրում: Այդ միջոցնե-  
րից գլխավորները յոթն էին:

1. Դա հանդիսանում էր Հոկտեմբերյան ռևոլուցիայի մի-  
ջոցով էքսպրոպրիացիայի ենթարկված ֆարրիկաներն ու գործա-  
րանները, հողի ազգայնացումը, նրանց վերածումը սոցիալիս-  
տական սեփականության: Դա նվերով սոցիալիստական պետու-  
թյան ձեռքում որպէս հանրային, ժողովրդական սեփականու-  
թյուն, նրանք հանդիսանում էին սոցիալիստական կառավարման  
կարևորագույն աղբյուրներից մեկը:

2. Դա ցարական կառավարության պարտքերի չեղյալ հայ-

տարարելն էր: Յարական կառավարության արտաքին և ներքին պարտքերը հասնում էին մոտ 26 միլիարդի: Այդ պարտքերի մուծման դեպքում մենք տարեկան հարյուրավոր միլիոն ուրվի միայն տոկոսներ պետք է վճարեինք ի վնաս մեր արդյունաբերության և ժողովրդական տնտեսության: Այդ պարտքերի չեղյալ հայտարարումը խոշոր չափով նպաստում էր սոցիալիստական կուտակմանը:

3. Դա վերականգնված սոցիալիստական արդյունաբերության կուտակումներն էին, նրա շահույթները:

4. Դա ազդայնացման ենթարկված արտաքին առևարի շահույթներն էին, որոնք կարող էին օգտագործվել ինդուստրացման նպատակների վրա:

5. Դա ներքին առևարից առաջացած շահույթների օգտագործումն էր:

6. Դա բանկային սխտեմից ստացված շահույթներն էին, և վերջապես.

7. Դա պետական բյուջեի միջոցներն էին:

Ահա այդ հիմնական աղբյուրները, որոնք առկա էին սոցիալիստական ժողովրդական տնտեսության սխտեմում և որը կարելի էր օգտագործել երկրի ինդուստրացման նպատակների համար: Խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի մենք թույլ չտայինք կուտակման այդ միջոցների ցրմանը և մանրացմանը ամբողջ երկրով մեկ, և կենտրոնացնեինք այդ բոլոր առանձին աղբյուրները մի ընդհանուր հոսանքում պետության ձեռքին՝ ռացիոնալ կերպով օգտագործելու համար: Խնդիրը կայանում էր նրանում, որ մենք կարողանայինք փակել այն բոլոր ուղիները, որոնք կարող էին տանել կուտակման այդ միջոցների որոշ մասը դեպի մասնավոր կապիտալի գրպանը: Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի մենք կարողանայինք խիստ խնայողությամբ և նպատակահարմար ձևով օգտագործել այդ միջոցները, խիստ խնայողական ուժիմ մտցնելինք մեր բոլոր պետական, տնտեսական, կոոպերատիվ և այլ կազմակերպություններում՝ միջոցների ծախսման հարցում: Այսպես էր դրված հարցը:

Երկրի ինդուստրացման ֆինանսական միջոցների գործում խոշոր նշանակութուն ունեցավ մեր հայրենիքի աշխատավորական լայն մասսաների խնայողությունները, որոնք մասսայա-

կան փոխառությունների միջոցով օգտագործվեցին երկրի ին-  
դուստրացիան նպատակների համար: Ինչպես հայտնի է, առա-  
ջին մասնաշաղկի փոխառությունը բաց թողնվեց 1927 թվին:  
Նա կրում էր «Երկրի ինդուստրացիան փոխառություն»  
անունը: Այդ փոխառությունը տվեց 200 միլիոն ուերլու կու-  
տակում: Այժմ աշխատավորական մասսաների խնայողություննե-  
րը փոխառության գծով, սրունք օգտագործվում են մեր երկրի տըն-  
տեսական, բազմական և կուլտուրական շինարարության նպա-  
տակների համար, տասնյակ միլիարդների է հասնում: ՄՍՌՄ-ի  
տասնյակ միլիոն աշխատավոր մասսաներ պետական փոխառու-  
թյան սարտատոմսեր ունեն այժմ: Դրանով իսկ նրանք անձ-  
նական մասնակցություն են ցուցաբերում կոմունիզմի կառույց-  
ման մեծ գործին:

Արմատական տարրերություն կա ինդուստրացիան կապի-  
տալիստական և սոցիալիստական ուղիների միջև ոչ միայն մի-  
ջոցների հայթայթման տեսակետեց, այլև ինդուստրացիան մե-  
թոդների տեսակետից: Գլխավոր կապիտալիստական երկրների  
ինդուստրացումը սկսվել է նախ և առաջ թեթև արդյունաբերու-  
թյան զարգացումից: Թեթև արդյունաբերությունը կապիտալ-  
ների ավելի քիչ ներդրում է պահանջում և ավելի արագ շրջա-  
նառություն է կատարում: Այստեղ շահույթի ստացումը ավելի  
հեշտ է, քան ծանր արդյունաբերության մեջ: Զարգացնելով թե-  
թև արդյունաբերությունը, կապիտալիստական երկրները երկար  
տարիների ընթացքում նրանից ստացված շահույթները կու-  
տակում էին բանկերում, սլայմաններ ստեղծում ծանր ար-  
դյունաբերության զարգացման համար: Միայն այս բոլորից  
հետո է սկսվում ծանր արդյունաբերության զարգացման հեր-  
թը, կապիտալների տեղաշարժը դեպի ինդուստրիան: «Սակայն  
դա երկարատև պրոցես է, — մատնանշում է ընկեր Ստալինը, — որը  
պահանջում է մի քանի տասնամյակի մեծ ժամկետ, որի ըն-  
թացքում հարկ է լինում սպասել թեթև արդյունաբերության  
զարգացման և նեղվել առանց ծանր արդյունաբերության: Հաս-  
կանալի է, որ կոմունիստական պարտիան չէր կարող կանգնել  
այդ ուղու վրա: Պարտիան դիտեր, որ վերահատ է պատերազմը,  
որ առանց ծանր ինդուստրիայի հնարավոր չէ երկիրը պաշտ-  
պանել, որ անհրաժեշտ է արագ ձեռնամուխ լինել ծանր ինդուս-

տրիայի դարդացմանը, որ այդ գործում ուշանալը նշանակում է տանուլ տալ»։ (Ի. Ստալինի Ճառ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946 թ. փետրվարի 9-ին, էջ 16, հայ. հրատ.)։

Այսպիսով, էլ ավելի դժվարանում էր մեր երկրի ինդուստրացման գործը։ Մենք պետք է սկսեինք անմիջապես ծանր արդյունաբերության դարդացումից և յոթմղոնյան քայլերով առաջ տանեինք այդ։ Դրանից էր կախված մեր երկրի ինքնուրույնության հարցը, սոցիալիզմի կառուցման բախտը մեր երկրում, Սովետական իշխանության գոյության հարցը ՍՍՌՄ-ում։

Այնուհետև սկզբունքային տարբերությունը գոյություն ունի ինդուստրացման կապիտալիստական և սոցիալիստական եղանակի միջև՝ աշխատավորական մասսաների շահերի տեսակետից։ Ինդուստրացման կապիտալիստական եղանակը տանում է դեպի ինդուստրացման և աշխատավորական լայն մասսաների շահերի խզումն ու հակադրությունը, դեպի ներքին հակասությունների սրումը աշխատանքի և կապիտալի միջև։ Նա տանում է դեպի միլիոնավոր աշխատավորական մասսաների աղքատացումը, գործազրկության աճումը մի բևեռում և հսկայական հարստության կուտակումը մի խումբ կապիտալիստների ձեռքին՝ մյուս բևեռում։ Նա տանում է դեպի կապիտալի արտահանման ուժեղացումը՝ մյուս երկրները։ Հետևապես ինդուստրացման կապիտալիստական եղանակը դա կապիտալի շահագործման ուժեղացումն է երկրի ներսում և երկրից դուրս։

Այստեղից՝ ինդուստրացման կապիտալիստական եղանակը չի կարող իր ընդունելությունն ու օժանդակությունը գտնել լայն աշխատավորական մասսաների կողմից։

Ինդուստրացման սոցիալիստական եղանակը, ընդհակառակը, տանում է դեպի ինդուստրացման և լայն աշխատավորական մասսաների շահերի միասնության ամրապնդումը, դեպի ներքին հակասությունների մեղմացումն ու հաղթահարումը, դեպի սոցիալիստական սիստեմի հաղթանակը կապիտալիստական տարրերի նկատմամբ, պայմաններ է ստեղծում քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրությունը վերացնելու, տանում է դեպի աշխատավորական լայն մասսաների նյութական-կուլտուրական զրույթյան անընդհատ

քարելավումը, դեպի սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում: Հետևապես ինդուստրացման սոցիալիստական եղանակը դա կապիտալիստական շահագործման ոչնչացումն էր նշանակում մեր երկրում:

Այստեղից՝ ինդուստրացման սոցիալիստական եղանակը արտահայտում էր մեր երկրի աշխատավորության լայն մասսաների անմիջական շահերը և ամենաջերմ ընդունելություն դրանում նրանց մեջ ու ամենաակտիվ օգնությունը նրանց կողմից Սովետական պետությանը:

Իր բազմաթիվ ղեկուցումների մեջ, ելույթներում և հողավածներում ընկեր Ստալինը հանձարեղ կերպով մշակեց երկրի ինդուստրացման հետ կապված բոլոր հարցերը, այդ հարցերի բոլոր կողմերը, սոցիալիստական ինդուստրացման ուղիներն ու մեթոդները և մորիլիզացնելով մեր պարտիայի, բանվոր դասակարգի, սովետական ամբողջ ժողովրդի կամքն ու եռանդը, ուղղեց այն դեպի մեր երկրի ինդուստրացումը:

Այսպիսին էր ընկեր Ստալինի կողմից մշակված պարտիայի գլխավոր գիծը երկրի ինդուստրացման հարցում, նրա տեմպերի, ինդուստրացման եղանակի, աղբյուրների և մեթոդների հարցում:

### ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՍՍՌՄ-ում

1929 թիվը հանդիսանում է մեր երկրում սոցիալիզմի կառուցման պատմության մեջ նշանակալից տարեթիվ: Այդ թվականին, Հոկտեմբերյան Մեծ ուսուցիչայի 12-րդ տարեդարձի կապակցությամբ, ընկեր Ստալինը «Պրավդայում» տպագրեց իր պատմական հողավածը—«Մեծ բեկման տարին»: «Անցած տարին սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում մեծ բեկման տարի էր,—սկսում է իր հողավածն ընկեր Ստալինը: Այդ բեկումն ընթանում էր ու շարունակում է ընթանալ քաղաքի և գյուղի կապիտալիստական էլեմենտների դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանի տակ: Այդ հարձակման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նա մեզ արդեն մի շարք վճռողական հաջողութուններ է տվել մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման (ուկոնստրուկցիայի) հիմնական բնագավառներում»: (Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 325, 1940 թ., Երևան):

Վճռական նվաճումները սոցիալիստական շինարարության քնադավառում երեքն էին, որոնցից երկուսը վերաբերում էին արդյունաբերությանը: Առաջինը աշխատանքի արտադրողականության բարձրացման քնադավառում ստեղծած բեկումն էր:

«Հազիվ թե կարելի է կասկածել, որ վերջին տարվա մեր շինարարության ամենակարևոր փաստերից մեկը, եթե ոչ ամենակարևոր փաստը, այն փաստն է, որ մեզ հաջողվեց վճռական բեկում առաջ բերել աշխատանքի արտադրողականության քնադավառում»: (Նույն տեղը, էջ 326): Այդ նվաճումն ստեղծվեց մեր երկրի պրոլետարիատի ստեղծադործական նախաձեռնությամբ, բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի և ինքնաքննադատության ծավալման հողի վրա, աշխատանքային կարգապահության և սկսված հզոր սոցիալիստական մրցման միջոցով, արտադրության մեջ ուտինայի և անշարժության դեմ մղած վճռական պայքարի միջոցով: Այդ բոլորի հիման վրա սկսվել էր մեծ վերելք աշխատանքի արտադրողականության քնադավառում, իսկ աշխատանքի արտադրողականությունը «...դա վերջին հաշվով ամենակարևորն է, ամենազլխավորը նոր հասարակարգի հաղթության համար»: (Լենին, Երկեր, հատոր 24, էջ 342):

Երկրորդ վճռական հաջողությունը, որը բխում է առաջինից, դա երկրի ինդուստրացման կոսպիտալ շինարարության համար կուտակումներ անելու պրոբլեմի բարենաջող լուծումն էր, որը հնարավորություն էր տալիս արագացնելու երկրի ինդուստրացման տեմպերը: Եթե 1928 թվին կապիտալ ներդրումները խոշոր արդյունաբերության մեջ հավասար էին 1,600 միլիոնի, որից ծանր արդյունաբերության բաժին էր ընկել 1,300 միլիոն, ապա 1929 թ. կապիտալ ներդրումներն արդեն կազմում էին 3,400 միլիոն ուրլի, որից ծանր արդյունաբերության ներդրումները կազմում էին 2500 միլիոն ուրլի: Եթե ծանր արդյունաբերությունը 1928 թվին տվեց 32 տոկոս աճ, ապա 1929 թվին տվեց մոտ 46 տոկոս, որը գերազանցում էր հնգամյա պլանի օպտիմալ վարիանտին: «... միթե պարզ չէ, — ասում էր ընկեր Ստալինը, — որ ծանր արդյունաբերության կառուցման համար կուտակում անելու պրոբլեմը մեզ համար անհաղթահարելի դժվարություններ չի ներկայացնում» (Ի. Ստալին, Լենինի դժի հարցերը, էջ 328, 1940 թ., Երևան):

Երրորդ նվաճումը դա գյուղատնտեսության բնագավառում կատարված արմատական բեկումն էր, երբ գյուղացիական մասսաները իրենց անհատական մանր, մասնավոր տնտեսություններից մասսայական կերպով շրջադարձ կատարեցին դեպի գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ուղին: Ահա թե որոնք էին մեր նվաճումները մեծ բեկման տարում:

Ինչ եղրակացություն այստեղից:

«Մենք ամբողջ թափով գնում ենք ինդուստրացման ճանապարհով—դեպի սոցիալիզմ, մեր հետևում թողնելով մեր դարավոր, «ռուսեթյան» հետամնացությունը: Մենք դառնում ենք մետաղե երկիր, ավտոմոբիլացման երկիր, տրակտորացման երկիր: Եվ երբ ՍՍՌՄ-ն ավտոմոբիլ նստեցնենք, իսկ մուժիկին՝ տրակտոր—թող փորձեն հասնել մեզ արքո կապիտալիստները, որոնք գոռողանում են իրենց «քաղաքականությամբ»: Մենք դեռ կտեսնենք, թե այն ժամանակ երկրներից որոնք կարելի է հետամնացների կարգը «դասել» և որոնք՝ առաջավորների կարգը»: (Նույն տեղում, էջ 337):

\* \* \*

Այդ իմաստուն, մարդարեական խոսքերից հետո անցնում է մոտ երեք տարի, որի ընթացքում, ժամկետից առաջ, իրագործվում է Ստալինյան առաջին հնգամյակը—սոցիալիզմի պատվանդանի կառուցման հնգամյակը մեր երկրում: 1933 թվականին պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հունվարյան պլենումում ընկեր Ստալինը զեկուցում է տալիս հնգամյակը չորս տարում իրագործելու արդյունքների մասին:

Վիթխարի էին մեր նվաճումները երկրի ինդուստրացման բնագավառում: Մեկ հնգամյակի ընթացքում փոխվեց մեր երկրի տնտեսական դեմքը, նրա տնտեսական հզորությունը: Ստալինյան առաջին հնգամյակի ընթացքում կառուցվեցին և շարք մտան (լրիվ կամ մասամբ) բազմաթիվ խոշոր և զերխոշոր գործարաններ, մեր երկրի ինդուստրիալ հիմքերը—1500 ժամանակակից առաջնակարգ արդյունաբերական ձեռնարկությունները:

Ան մետաղարդյունաբերության մեջ՝ շարք մտան Ստալինի անվան Մագնիտագորսկի գիգանտ գործարանը, Ստալինի անվան Կուզնեցսկի կոմբինատը, Օրջոնիկիձեի անվան Զասյորոժստրոյը,

Կերչի Վոյկովի անվան գործարանը, Չելյարինսկի ֆերոսպլավի գործարանը: Մեքենաշինության բնագավառում՝ շարք մտան ծանր մեքենաշինության Կրամատորսկի և Սվերդլովսկի գործարանները, Ստալինի անվան ավտոգործարանը, Մոլոտովի անվան ավտոգործարանը: Լրիվ<sup>6</sup> կամ մասամբ շարք մտան Ստալինգրադի և Խարկովի տրակտորի գործարանները, Կոմբայնի գործարանը Սարատովում և «Կոմունարը», Ստալինի անվան դյուղգործիքների գործարանը Ռոստովում, և Կադանովիչի անվան դյուղգործիքների գործարանը Գոմելում, Վորոշիլովի անվան նույնպիսի գործարան Տաշքենդում: Էլեկտրոէներգիայի գծով՝ շարք մտան Լենինի անվան Գնեպրոդէս գիգանտը, Չուևի ռայոնական էլեկտրակայանը, Չելյարինսկի, Կուզնեցսկի, Կաշիրի, Շաիրովկայի, Սվիրի, Գորկու էլեկտրակայանները: Բիմիական արդյունաբերության գծով՝ հիմք դրվեցին այնպիսի խոշորագույն կոմբինատների, ինչպիսիք են Բերեզնիկովսկու, Վասիլեւենկայի, Յարոսլավսկի, Բորբիկովի կոմբինատները և այլն:

Ամփոփելով առաջին հնգամյակի արդյունքները ինդուստրացման բնագավառում, ընկեր Ստալինը մատնանշում էր հետևյալը.

«Որո՞նք են չորս տարում կատարված հնգամյակի հանրագումարները արդյունաբերության բնագավառում:

Հաղթություն ձեռք բերի՞նք արդյոք մենք այդ բնագավառում:

Այո, ձեռք բերինք: Եվ ո՞չ միայն ձեռք բերինք, այլև ավելի շատ բան արինք, քան սպասում էինք մենք ինքներս, քան կարող էին սպասել մեր պարտիայի ամենատաք զլուխները: Այժմ այդ չեն ժխտում նույնիսկ թշնամիները, առավել ևս այդ չեն կարող ժխտել մեր բարեկամները:

Մենք չունեինք սև մետաղագործություն, երկրի ինդուստրացման հիմքը: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք տրակտորային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք ավտոմոբիլային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք դադդահաշինություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք լուրջ և ժամանակակից քիմիական արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք իսկական և լուրջ արդյունաբերություն՝ ժամանակակից դյուդատնտեսական մեքենաների արտադրության համար: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեինք ավիացիոն արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն» (Ի. Ստալին, Լենինի դմի հարցերը, էջ 456, 1940 թ., Երևան):

Ընկեր Ստալինի այս խոսքերում հնչում է մեր մեծ ինդուստրիալ երկրի սիմֆոնիան, որի ստեղծողը նա է, մեր հաղթանակների բոլոր սիմֆոնիաների մեծ ստեղծագործողը:

Առաջին հնդամյա պլանի իրագործման ընթացքում մեր երկրի ինդուստրիալ զարգացման գործում վիթխարի մի աշխատանք ևս նախաձեռնվեց: Դա ածխամետաղարդյունաբերության մի նոր, երկրորդ բաղաչի ստեղծումն էր ՍՍՌՄ-ի արևելքում: Խնդիրն այն էր, որ Սովետական Միության արդյունաբերությունը մինչև այդ հենվում էր միայն մեկ ածխամետաղարդյունաբերության բաղաչի վրա, ուղրաինական բաղաչի վրա, որը չէր կարող բավարարել վիթխարի չափով զարգացող արդյունաբերության պահանջները: Անհրաժեշտ էր ստեղծել ածխամետաղարդյունաբերության մի նոր, երկրորդ բաղա ևս: Այդ նոր բաղան ստեղծվեց ընկեր Ստալինի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ՍՍՌՄ-ի արևելքում, Ուրալում և Կուզբասում. նա հանդիսացավ մեր երկրի ինդուստրացման, մեր Հայրենիքի անկախության և պաշտպանության վճռական բաղաներից մեկը:

Երկրի ինդուստրացման բնագավառում առաջին հնդամյակի ընթացքում ձեռք բերված նվաճումներն այն հետևանքն ունեցան, որ ՍՍՌՄ-ն վերածվեց հզոր ինդուստրիալ երկրի, կապիտալիստական էլեմենտները վերջնականապես և անվերադարձ կերպով դուրս մղվեցին արդյունաբերությունից, իսկ սոցիալիստական արդյունաբերությունը դարձավ ինդուստրիայի միակ ձևը մեր երկրում:

«Իսկ այդ ամենի հետևանքն այն եղավ, — եզրակացնում է ընկեր Ստալինը, — որ մեր երկիրն ազրարային երկրից դարձավ ինդուստրիալ երկիր...»: (Նույն տեղում, էջ 457):

Նույնպիսի վիթխարի և վճռական հաղթանակ ձեռք բերվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Առաջին հնգամյակի սկզբին սովետական գյուղում մեծ բեկում սկսվեց գյուղացիության մեջ դեպի կոլխոզային կարգերը: Գյուղացիական մասսաները 1929—1930 թվականներին մասսայաբար կոլխոզ մտան: Ընդամենը երեք տարվա ընթացքում գյուղում կազմակերպվեցին ավելի քան 200.000 կոլխոզներ և մոտ 5000 սովխոզներ: Գյուղացիական տնտեսությունների ավելի քան 60 տոկոսն ընդգրկվեց կոլեկտիվ տնտեսություններում: Համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի ենթարկվեց կուլակությունը որպես դասակարգ: «Պարտիան հասավ այն բանին, — ասում էր ընկեր Ստալինը, — որ ՍՍՌՄ-ն մանր-գյուղացիական տնտեսության երկրից արդեն փոխակերպվել է աշխարհիս ամենախոշոր գյուղատնտեսության երկրի»: (Ի. Ստալին, Լենինի զմի հարցերը, էջ 466, Երևան, 1940):

Կոլխոզային կարգերի հաղթանակը սովետական գյուղում մեր սլարտիայի և սովետական կառավարության, մասնավորապես ընկեր Ստալինի ամբողջ նախընթաց տարիների անդուլ աշխատանքի արդյունքը հանդիսացավ: Այդ ասպարեզում առաջնակարգ նշանակութուն ունեցավ սոցիալիստական ինդուստրիայի կողմից գյուղատնտեսության մասսայական կերպով տրակտորներ և այլ մեքենաներ մատակարարելու գործը, ՄՏԿ-երի կազմակերպումը գյուղում: Սոցիալիստական ինդուստրիան տեխնիկական վերազինման ենթարկեց գյուղատնտեսությունը: Անմահ Լենինը 1919 թվի մարտին, սլարտիայի 8-րդ համագումարում մատնանշում էր հետևյալը. «Եթե մենք կարողանայինք վաղը տալ 100.000 առաջնակարգ տրակտոր, ապահովենք նրանց բենզինով, ապահովենք նրանց մեքենավարներով (դուք հիանալի գիտեք, որ դա դեռևս ֆանտազիա է), ապա միջակ գյուղացին կասեր. «Ես կոմունիստի (այսինքն կոմունիզմի) կողմնակից եմ» (Լենին, Ընտիր երկեր, երկու հատորում, հատոր 2-րդ, էջ 292, ռուս. հրատ., 1936 թ.)

Մեր երկրի սոցիալիստական ինդուստրացումն այդ ֆանտազիան ունի իրականութուն դարձրեց: 1928 թվի հոկտեմբերին գյուղում կար մոտ 27000 տրակտոր, իսկ 1933 թվականի հոկտեմբերին սոցիալիստական դաշտերում գործում էին

արդեն 148.000 տրակտոր և հարյուր հազարավոր այլ գյուղատնտեսական մեքենաներ:

Վիթխարի էին առաջին հնգամյակի արդյունքները նաև բանվորների, գյուղացիների և սովետական ինտելիգենցիայի նյութական դրուժյան բարելավման բնագավառում, ասլրանքաշրջանառության բնագավառում, թշնամի դասակարգերի լիկվիդացման բնագավառում:

Սակայն պարտիան, ընկեր Ստալինի դեկավարությամբ, կանգ չառավ այդ նվաճումների վրա: Նա ավելի ընդարձակ չափով առաջ տարավ երկրի ինդուստրացման գործը երկրորդ հնգամյակում: Պետք էր իրագործել պատմական նոր խնդիրներ՝ վերջնականապես լիկվիդացնել շահագործող դասակարգերը, ընդամիշտ վերացնել այն պատճառները, որոնք ծնունդ էին տալիս մարդու շահագործումը մարդու կողմից և հասարակության բաժանմանը շահագործողների և շահագործվողների:

Այս նոր խնդիրները հնարավոր էր իրագործել նախ և առաջ երկրի ինդուստրացման հեռագա առավել ընդարձակ ծավալման հիման վրա և, որ գլխավորն է, ողջ ժողովրդական տրնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու բաղայի վրա: Երկրի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը հանդիսանում էր երկրորդ հնգամյակի տնտեսական գլխավոր խնդիրը: Այժմ անհրաժեշտ էր շարունակել և ավարտել մեր մետաղարդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, սննդի արդյունաբերությունը, անտառային արդյունաբերությունը, սաղմական արդյունաբերությունը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը նորագույն և ժամանակակից մեքենաներով և գաղզահներով վերազինելու գործը:

Այդ նոր վիթխարի խնդիրները նույնպես հաջողությամբ կենսագործվեցին: Երկրորդ հնգամյակի ընթացքում շարք մտան 4500 խոշորագույն ձեռնարկություններ, առաջին հնգամյակի 1500 ձեռնարկության փոխարեն: Ամբողջ ժողովրդական տնտեսությունը զինվեց լավագույն, առաջնակարգ տեխնիկայով: Հիմնականում ավարտվեց ողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը: Երկրորդ հնգամյակի վերջին տարում արդյունաբերության ամբողջ արտադրանքի ավելի քան 80 տոկոսն ստացվում էր առաջին և երկրորդ հնգամյակի ըն-

Թացքում նոր կառուցված, կամ ամբողջապես վերակառուցված գործարաններից: Երկրորդ հնդամյակի ընթացքում ավելի բուռն թափով զարգացավ մեքենաշինությունը, սոցիալիստական ինդուստրիայի սիրտը: Նրա արտադրանքն ավելացավ ավելի քան 3 անգամ, գերազանցելով երկրորդ հնդամյակի բոլոր նախատեսումները: Սովետական մեքենաշինությունը նորագույն տեխնիկայով զինեց մեր էլեկտրաարդյունաբերությունը, մեխանիզացիայի ենթարկեց ածխի հանումն ու բեռնումն, անտառային, տեքստիլ, ձկան, տրանսպորտի և արդյունաբերության մյուս ճյուղերը: Հիմնականում ավարտվեց գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը: Տրակտորային պարկի հզորությունը ՄՍՌՄ-ում 2,225 հազար ձիաուժից՝ առաջին հնդամյակի ընթացքում, բարձրացավ մինչև 8,385 հազար ձիաուժի 1937 թվին, խոշոր չափով մեխանիզացիայի ենթարկվեց ֆիզիկական աշխատանքը գյուղատնտեսության մեջ:

Բոլոր հնդամյակների վիթխարի կառուցողական, ստեղծագործական աշխատանքների ամբողջ ծրագիրը թելադրված է մեծ Ստալինի կողմից: ՄՍՌՄ-ում չկա մետաղարդյունաբերության, մեքենաշինության, ավտոարդյունաբերության, հավաշինության, երկաթուղային մագիստրալների, քիմիական և ռազմական արդյունաբերության, ջրանցքների և այլ գործարանների ու ֆաբրիկաների կառուցման և ոչ մի կարևոր օբեկտ, որը կապված չլինի ընկեր Ստալինի անվան հետ, չհանդիսանա նրա նախաձեռնության արդյունքը:

Այս մասին չափազանց հետաքրքիր կերպով պատմեց ընկեր Կուլբիշևը պարտիայի 17-րդ համագումարում, 1934 թվին, երկրորդ հնդամյակի պլանի կապակցությամբ:

«Մետաղարդյունաբերության գործարանների կառուցման ծրագիրը, — ասում էր ընկեր Կուլբիշևը, — նշվել է ընկեր Ստալինի կողմից: Մանրամասն, ուշադրությամբ քննության առավ ընկեր Ստալինը գործարան առ գործարան և նշեց կառուցման այն օբեկտները, որոնք առաջին հերթին պետք է կառուցվեն երկրորդ հնդամյակում: Տրանսպորտային մեքենաշինության գործարանների կառուցման ծրագիրը նույնպես որոշված է ընկեր Ստալինի կողմից: Երկաթուղային հաղորդակցության ժողկոմասի վերանորոգման բազաների ստեղծումը, շոգեքարշերի և

վագոսնների մի շարք վերանորոգման գործարանների կառուցումը—այս ծրագիրը նշված է եղել ընկեր Ստալինի կողմից: Ավտոմոբիլային գործարանների կառուցումը—ինչպիսի գործարաններ, որտեղ, ինչպիսի կարողության գործարաններ պետք է կառուցել՝ տառացիորեն ընկեր Ստալինի ձեռքով են գրված: Ծովային նավաշինության գործարանների կառուցման ծրագիրը նշվել է ընկեր Ստալինի կողմից: Սինթետիկ կաուչուկի գործարանների կառուցման ծրագիրը թելագրված է ընկեր Ստալինի կամքով և հաստատակամությամբ: Ալյումինի գործարանների կառուցումը սրոշվել է ընկեր Ստալինի կողմից: Ավիացիոն գործարանները կառուցվում են այն վայրերում և այնպիսի հզորությամբ, ինչպես մատնանշել է ընկեր Ստալինը: Երկաթուղային հիմնական մագիստրալների կառուցման ծրագիրը, ճանապարհային շինարարության ծրագիրը (այնպիսի խոշոր ճանապարհային մագիստրալների կառուցումը, ինչպես Մոսկվա—Սարարովսկ, Մոսկվա—Թիֆլիս և այլն),—այդ բոլորը առաջադրված է ընկեր Ստալինի կողմից: Զբանցքների կառուցումը՝ Բելոմոր ջրանցքը, Վոլգա—Դոնը, Մարինսկի սիսանմը—այդ բոլորը ընկեր Ստալինի նախաձեռնությունն է: Ես հնարավորությունն չունեմ թվելու սոցիալիստական կառուցման այն բոլոր բնագավառները, որոնց առթիվ ընկեր Ստալինը տվել է հետագա զարգացման կռակներն ծրագիրը:

Մեծ առաջնորդի ղեկավարությամբ ծնունդ առավ սոցիալիզմի կառուցման վիթխարի ծրագիր երկրորդ հնգամյակում» (Կուլյբիշև: Հոգվածներ և ճառեր, հատ. 5-րդ, էջ 561—562, 1937 թ., ռուսերեն):

Նույնպիսի վիթխարի աշխատանք է կատարել ընկեր Ստալինը մեր երկրի ինդուստրիալ կազրերի՝ ինդուստրիալ բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների և հրամանատարական կազմի կազրեր պատրաստելու գծով: Դեռևս 1924 թվի նոյեմբերի 7-ին «Դինամո» գործարանի կարմիր դրքում ընկեր Ստալինը գրել է՝ «Ցանկանում եմ «Դինամոյի» բանվորներին, ինչպես նաև ամբողջ Ռուսաստանի բանվորներին, որ մեր արդյունաբերությունը բարգավաճի, որ պրոլետարների թիվը Ռուսաստանում մերձավորագույն ժամանակաշրջանում բարձրանահասնի 20—30 միլիոնի...»: (Ի. Ստալին, Երկեր, հատ. 6, էջ 371):

Ընկեր Ստալինի այս ցանկությունը վաղուց է իրականություն դարձել:

1928 թվականի Շախտիի գեպքից հետո (Դոնբասում) ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով բոլշևիկյան պարտիան և Սովետական կառավարությունը բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունների մի ամբողջ ցանց ստեղծեցին ՄՍՌՄ-ում: ՄՍՌՄ-ի հարյուրավոր բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունները հարյուր-հազարավոր առաջնակարգ ինժեներական-տեխնիկական ու ղեկավար կադրեր են տվել մեր սոցիալիստական արդյունաբերությանը:

Ընկեր Ստալինը ամենահմուտ այգեպանի պես օրնիրուն, անգաղբում աճեցրել և աճեցնում է սոցիալիզմի բոլոր բնագավառների և հատկապես սոցիալիստական ինդուստրիայի ղեկավար-հրամանատարական կադրեր, նրա «դեններալիտեր»:

Ստալինյան երկրորդ հնգամյակը դարձավ միաժամանակ նոր ստեղծված տեխնիկայի յուրացման հնգամյակ: Դեռևս առաջին հնգամյակի արդյունքները ամփոփելիս ընկեր Ստալինն առաջ քաշեց նոր տեխնիկայի յուրացման հարցը: «Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում, — ասում է ընկեր Ստալինը, — մենք կարողացանք կազմակերպել նոր շինարարության խանդավառությունը, պափոսը և վճռողական հաջողություններ ձեռք բերինք: Այդ շատ լավ է: Բայց այժմ այդ քիչ է: Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք նոր դործարանների ու նոր տեխնիկայի յուրացման խանդավառությամբ, պափոսով, աշխատանքի արտադրողականության լուրջ բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճատումով:

Այդ է այժմ գլխավորը»: (Ի. Ստալին, Լենինի դմի հարցերը, էջ 462, Երևան, 1940 թ.):

Մեր երկրի բանվոր դասակարգը, կոլխոզային դյուղացիությունը և սովետական ինտելիգենցիան պատվով կատարեցին ընկեր Ստալինի կողմից առաջ քաշված այդ գլխավոր խնդիրը: Առաջնորդին առաջինը պատասխանեց բանվոր դասակարգը հզոր ստախանովական շարժմամբ: 1935 թվականի օգոստոսի 31-ի լույս սեպտեմբերի 1-ի դիշերը պատմական օր դարձավ մեր երկրի բանվոր դասակարգի ստեղծադործական կյանքում: Այդ դիշերը, Դոնբասում, Ալեքսեյ Ստախանովը վճռական հարված

հասցրեց աշխատանքի կազմակերպման հին, քարացած մեթոդներին: Նա այդ գիշերն աշխատանքի արտադրողականության ասպարեզում չափանված արդյունքների հասավ: Մեկ հերթափոխում նա կարեց 102 տոննա ածուխ, 14 րոպեում կամ 1400 տոկոսով գերազանցելով ածխի արտադրություն նորմաները: Ալեքսեյ Ստախանովը նոր էջ բացեց մեր երկրի հերոսական բանվոր դասակարգի ստեղծագործական պատմության մեջ: Նա հիմք դրեց նոր, վիթխարի և փառավոր ստախանովյան շարժմանը: Նրա օրինակը հուզեց, ալեկոծեց և աշխատանքային սխրագործության դուրս բերեց մեր երկրի առաջավոր բանվորներին: Ստախանովին հետևեց Բուսիգինը—ավտոարդյունաբերության մեջ, Սմետանինը—կոշկի արդյունաբերության մեջ, Կրիվոնոսը—երկաթուղային տրանսպորտում, Վինագրադովաները—տեքստիլ արդյունաբերության մեջ, Մուսինսկին—անտառային արդյունաբերության մեջ, Մարիա Դեմչենկոն, Մարիա Դնատենկոն, Անգելինան, Կավարդակը և մյուսները գյուղատնտեսության մեջ: Այնուհետև նրանց հետևեցին նոր ջոկատներ, հազարներ և տասնյակ հազարներ: Ալեքսեյ Ստախանովի մեծ նախաձեռնությունը լայն արձագանք գտավ ամբողջ մեր երկրով մեկ: Նա ընդգրկեց մեր արդյունաբերության բոլոր ճյուղերը, կոլխոզային դաշտերը, գիտական հաստատությունները, ամեն տեղ, որտեղ աշխատում է սովետական առաջավոր քաղաքացին:

Ընկեր Ստախանը հանձարեղ կերպով վերլուծման ենթարկեց ստախանովյան շարժումը, տվեց նրա լենինյան գնահատականը: Ստախանովյան շարժումը սոցիալիստական շինարարության պատմության մեջ կմտնի որպես նրա փառավոր էջերից մեկը,—ասում էր ընկեր Ստախանը Ստախանովականների առաջին խորհրդակցությունում, 1935 թ. նոյեմբերին: Ստախանովյան շարժումը ներկայացնում է մեր ինդուստրիայի ապագան,—ասում էր ընկեր Ստախանը: Այդ շարժման նշանակությունն այն է, որ նա խորտակում է տեխնիկայի օգտագործման վերաբերյալ հին հայացքները, առաջ քաշում նորարարությունը այդ ասպարեզում, նախապատրաստում պայմաններ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար, ճանապարհ է հարթում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակասությունը վերացնելու համար: Ստախանովյան շարժումը ծնունդ առավ որպես ներքևից

եկող շարժում: «Նա մեր ժամանակները ամենակենսուենակ և անհաղթահարելի շարժումն է հանդիսանում»—մատնանշում էր ընկեր Ստալինը: Այդ շարժման արմատները գտնվում են բանվոր դասակարգի նյութական դրության արմատական բարելավման մեջ, և այն բանի մեջ, որ մարդիկ մեզ մոտ աշխատում են ոչ թե շահագործողների համար, այլ իրենց համար, իրենց դասակարգի համար, սովետական ժողովրդի համար, սովետական հարազատ սկետության համար: Ստալինանովյան շարժումը սերտ կերպով կապված էր նոր տեխնիկայի հետ: Նրա արմատները գտնվում էին մեր երկրի տեխնիկական վերադիման մեջ, սոցիալիստական ինդուստրիայի մեջ: Ստալինանովյանները կարողացան տիրապետել նոր տեխնիկան, թամբել նրան, սովորեցին գնահատել և հաշվի առնել բանվորական օրվա բոլորներն ու վայրկյանները:

Երկրորդ հնգամյակի սլանները կատարումն ու գերակատարումը հնարավորություն տվեց բարելավել, ավելի քան երկու անգամ, սովետական ժողովրդի նյութական կենցաղային դրությունը, է՛լ ավելի դարդացնել ապրանքաշրջանառությունը երկրում, իրագործել կուլտուրական ուղղության ՍՍՌՄ-ում:

Այս բոլորի հիման վրա լուծվեց երկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը: Վերջնականապես լիկվիդացիայի ենթարկվեցին շահագործող դասակարգերը մեր երկրում: Գյուղում վերջնականապես հաղթանակեցին կոլխոզային կարգերը: Վերացավ մարդու շահագործումը մարդու կողմից, վերացավ թշվառությունը երկրում: Տնտեսության սոցիալիստական սիստեմը անբաժան կերպով հաղթանակեց ժողովրդական տնտեսության բոլոր բնադավառներում: Ամբապնդվեց սովետական ժողովրդի բարոյական-քաղաքական միասնությունը:



Ինչո՞վ բացատրել մեր երկրի ինդուստրացման և սոցիալիստական շինարարության բոլոր բնադավառներում ձեռք բերված վիթխարի նվաճումները այդքան կարճ ժամանակամիջոցում: Երկրի ինդուստրիալ զարգացման և էկոնոմիկայի բարդավաճման այդպիսի արագ տեմպ հայտնի չէ կապիտալիստական և ոչ մի երկրի համար, նույնիսկ նրա զարգացման ամենածաղկուն շրջանում:

Մեր դարգացման արագ տեմպերի և չտեսնված հաջողութ-  
թյունների պատճառը տնտեսության սոցիալիստական սիստեմի  
առավելությունների մեջ է, նրա արմատական տարբերության  
մեջ՝ տնտեսության կապիտալիստական սիստեմի համեմատու-  
թյամբ:

Ընկեր Ստալինը պարտիայի 16-րդ համագումարում, 1930  
թվին, հիանալի կերպով ցույց տվեց սովետական էկոնոմիկայի  
արմատական տարբերությունն և գերազանցությունը կապիտալիս-  
տական էկոնոմիկայի համեմատությամբ: Տնտեսության սովե-  
տական սիստեմը նշանակում է, որ իշխանության գլխուսը կանգ-  
նած է բանվոր դասակարգը, որ արտադրության միջոցներն ու  
գործիքները վերցվել են կապիտալիստներից և բանվորների ու  
գյուղացիների սեփականությունն են դարձվել, որ արտադրու-  
թյան դարգացումը ենթարկված է ոչ թե կապիտալիստական շա-  
հույթ ստանալու սկզբունքին, այլ պլանային ղեկավարման և  
մասսաների նյութական-կուլտուրական մակարդակի բարձրաց-  
մանը, որ ժողովրդական եկամուտը բաշխվում է ոչ թե հօգուտ  
շահագործող դասակարգերի, այլ հօգուտ աշխատավոր մասսանե-  
րի և ընդլայնված սոցիալիստական վերարտադրության, որ աշ-  
խատավորների նյութական դրության սիստեմատիկ բարելա-  
վումը ապահովում է մեր էկոնոմիկան գերարտադրության ճրգ-  
նաժամից և կապիտալիզմին հատուկ այլ անբուժելի հիվանդու-  
թյունից, որ մեղ մոտ երկրի տերն է հանդիսանում բանվոր  
դասակարգը և նա աշխատում է իր համար, իր դասակարգի հա-  
մար, իր պետության համար:

Տնտեսության սոցիալիստական սիստեմի կազմակերպման  
այդ գլխավոր գործոնները, որոնք չունի և չի կարող ունենալ  
տնտեսության կապիտալիստական սիստեմը, չտեսնված առա-  
վելություններ են ստեղծում սոցիալիստական էկոնոմիկայի զար-  
գացման համար:

Այնուհետև, տնտեսության կապիտալիստական սիստեմի  
ժամանակ էկոնոմիկայի զարգացումը գնում է տարերային, մարդ-  
կանց կամքից անկախ օրենքներով: Այնտեղ այդ տարերային  
օրենքներն են իշխում մարդկանց վրա: Տնտեսության սոցիա-  
լիստական սիստեմի ժամանակ դրությունն արմատապես փոխ-  
վում է: Մարդիկ հանդիսանում են իրենց արտադրահարարերու-

թյուևների տերերը, տիրապետելով էկոնոմիկայի զարգացման օրենքներին. սովետական պետությունը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տնտեսության զարգացումը իրենց ցանկացած ուղղությամբ է առաջ տանում:

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ—  
ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ Է

Պարտիայի 18-րդ համագումարը, 1939 թվականին, նոր էջ բաց արեց մեր Հայրենիքի զարգացման պատմության մեջ: Ստալինյան առաջին և երկրորդ հնգամյակների կենսագործման հիման վրա մեր երկիրը համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ ձեռք բերեց: Մենք հիմնականում կառուցեցինք սոցիալիստական հասարակարգը մեր երկրում: Այսպիսով, ՍՍՌՄ-ում իրագործվեց աշխատավոր մարդկության բազմաթիվ սերունդների երազած հասարակարգը: Այդ հասարակարգը մենք կառուցեցինք ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ:

Դեպի ուր պետք է ընթանա մեր երկրի զարգացումը այժմ, սոցիալիզմի կառուցումն հիմնականում իրագործելուց հետո, կապիտալիստական շրջապատի առկայության պայմաններում: Ընկեր Ստալինը ոչ միայն զարգացրեց մեկ երկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան թեորիան և կենսագործեց այն կյանքում, այլև տվեց մեկ երկրում, կապիտալիստական շրջապատման պայմաններում, սոցիալիզմից կոմունիզմին անցնելու թեորիան, մշակեց այդ անցման ծրագիրը և նրա իրագործման ուղիները: Պարտիայի 18-րդ համագումարում ընկեր Ստալինը կողմնորոշեց մեր երկրի զարգացումը դեպի սոցիալիստական հասարակարգի կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու կողմը: Սրանում է 18-րդ համագումարի պատմական նշանակությունը:

Ի՞նչ է հարկավոր սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար: Կոմունիստական հասարակարգին անցնելու համար հարկավոր է նախ և առաջ երկրի արտադրողական ուժերի այնպիսի զարգացում և այդ հիման վրա սպառման առարկաների ու մթերքների այնպիսի առատություն, որ նրանք բավարարեն մարդկանց բոլոր պահանջմունքները, և հասարակությունը կա-

ըողանա իրագործել կոմունիստական հասարակարդի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ նրա պահանջմունքների» սկզբունքը: Այնուհետև, կոմունիստական հասարակարդին անցնելու համար անհրաժեշտ է վերացնել մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրությունը, քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության միջև եղած տարբերությունը:

Այստեղից, մեր երկրի առաջ դրվեցին տնտեսական շինարարության նոր, էլ ավելի վիթխարի խնդիրներ: Այդ խնդիրները առաջ քաշվեցին ընկեր Ստալինի կողմից պարտիայի 18-րդ համագումարում:

«Մենք կապիտալիստական գլխավոր երկրներից անցել ենք արտադրության տեխնիկայի և արդյունաբերության զարգացման տեմպերի իմաստով, —ասում էր ընկեր Ստալինը 18-րդ համագումարում:—Այդ շատ լավ է: Բայց այդ քիչ է: Հարկավոր է նրանցից անցնել նաև տնտեսական տեսակետից: Մենք այդ կարող ենք անել, և մենք այդ պետք է անենք: Միայն այն դեպքում, եթե տնտեսապես Թեոսոֆի կապիտալիստական գլխավոր երկրներից, մենք կտրուղ ենք հույս ունենալ, որ մեր երկիրը լիովին հազեցված կլինի սպառման առարկաներով, մեզ մտա մթերքների առատություն կլինի և մենք հնարավորություն կունենանք կոմունիզմի առաջին փազից անցում կատարելու դեպի նրա երկրորդ փազը» (Ի. Ստալին, Լենինի դմի, հարցերը, էջ 704, Երևան, 1949 թ, ընդգծումներն իմն են — Օ. Հ.):

Սպառման առարկաների և մթերքների առատություն ստեղծելու հարցը կապված է երկրի արդյունաբերության և նախ և առաջ ինդուստրիայի բուռն զարգացման հետ, չուզուհի, պողպատի գլանվածքի, ածխի, հավթի, ընդհանրապես վառելանյութերի արդյունաբերության զարգացման հետ, մեքենաշինությունը որպես ծանր ինդուստրիայի սրտի՝ զարգացման հետ, քիմիական արդյունաբերության, էլեկտրաարդյունաբերության, շինարարության համար մեքենաներ արտադրող արդյունաբերության զարգացման հետ: Ինդուստրիալ զարգացման բուռն տեմպերի հետ է կապված մեր երկրի պաշտպանունակության ապահովումը կապիտալիստական շրջապատման պայման-

ներում: Միայն երկրի ինդուստրիայի բարձր զարգացման պայմաններում հնարավոր է դյուղատնտեսության, թեթև արդյունաբերություն, տրանսպորտի, անտառային արդյունաբերություն, վիթխարի շինարարական-կառուցողական աշխատանքների տեխնիկական գինվածություն հետագա հազեցումն ու կատարելագործումը և այդ հիման վրա մթերքների ու սպառման առարկաների առատություն ստեղծումը երկրում:

Հետևապես սոցիալիստական ինդուստրիայի հետագա զարգացումը կոմունիզմի կառուցման նյութական-տեխնիկական հիմքն է հանդիսանում: Միայն նրա բառն զարգացման բազայի վրա մենք կարող ենք տնտեսապես հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական երկրներից, և ստեղծելով սպառման առարկաների ու մթերքների առատություն, անցում կատարել սոցիալիզմից դեպի կոմունիզմը:

Ստալինյան երրորդ հնդամյա պլանը, որն ընդունվեց 18-րդ համագումարում, նախատեսում էր ժողովրդական տնտեսության զարգացման վիթխարի մի ծրագիր: Հատկապես նա նախատեսում էր ինդուստրիայի, ամենից առաջ պաշտպանողական ծանր ինդուստրիայի բուռն վերելքը: Նա նախատեսում էր բոլոր սեպուրիկաների արդյունաբերություն և ողջ ժողովրդական տնտեսության աննախընթաց վերելքը:

Ստալինյան երրորդ հնդամյակի կենսագործումը վճռական քայլ էր հանդիսանում ՍՍՌՄ-ի առաջ կանգնած գլխավոր տնտեսական խնդրի լուծման ճանապարհին, սոցիալիզմից կոմունիզմին անցնելու կարևորագույն էտապներից մեկը:

1941 թվականի երկրորդ կիսամյակում սկսված Հայրենական պատերազմը հնարավորություն չտվեց մեր երկրին ամբողջությամբ, լրիվ կերպով կենսագործելու երրորդ հնդամյա պլանը Սակայն մինչ պատերազմն եղած խաղաղ զարգացման երեք և կես տարիների ընթացքում հաջողությամբ կատարվում և գերակատարվում էին հնդամյակի տարեկան պլանների ցուցանիշները: Այդ տարիների ընթացքում երրորդ հնդամյա պլանն իրագործվեց՝ արդյունաբերության համախառն արտադրանքի գծով 86 տոկոսով, արտադրամիջոցների արտադրության գծով 90 տոկոսով, հացահատիկի համախառն արտադրանքի գծով 91 տոկոսով (1940 թ.), երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջա-

նառության գծով 92 տոկոսով: Նույնպիսի պատկեր գոյություն ուներ նաև մյուս ցուցանիշների գծով:

Այսպիսով, պլանի կենսագործման բոլոր ցուցանիշների ընթացքը վկայում էին այն մասին, որ երրորդ հնգամյակը նույնպես կկատարվեր ժամկետից շուտ: Մեր երկիրը հաստատ քայլերով առաջ էր գնում դեպի կոմունիզմը մեծ Ստալինի ղեկավարութեամբ, նրա գծած ուղիով:

\* \* \*

Հայրենական մեծ պատերազմի ընթացքում մեր երկիրը համառոտաբար հային պատմական մեծ հաղթանակ տարավ: Այդ հաղթանակը սովետական հասարակարգի, սովետական պետական կարգի, սովետական ղինված ուժերի գերազանցության և կենսունակության հաղթանակն էր իմպերիալիստական սխտեմի ամենառեակցիոն, ամենադիշատիչ, ամենաավաղակային ուժերի դեմ, ֆաշիստական ագրեսորների դեմ:

Պատմական այդ հաղթանակն անհնարին կլիներ մեր երկրի համար, եթե նա պատերազմին նախորդող ժամանակաշրջանում նախապես պատրաստված չլիներ ակտիվ պաշտպանության, եթե նա չունենար մետաղ՝ սպառազինություն արտադրելու համար, վառելանյութ՝ արդյունաբերության և տրանսպորտի դործունեության համար, բամբակ՝ հանդերձանք արտադրելու համար, հաց՝ բանակին և ազդարնակությանը մատակարարելու համար:

«Կարելի է արդյոք պնդել, — ասում է ընկեր Ստալինը, — որ երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց առաջ մեր երկիրն արդեն ուներ այդ կարիքները հիմնականում բավարարելու համար պահանջվող նվազագույն-անհրաժեշտ նյութական հնարավորությունները: Ես կարծում եմ, որ կարելի է պնդել... Համենայն դեպս, մեր երկրի դրությունը այդ տեսակետից երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1940 թվին, մի քանի անգամ ավելի լավ էր, քան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1913 թվին» (Ստալին, Ճառ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընարական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946 թ. փետրվարի 9-ին, Հայպետհրատ, էջ 13):

Հայրենական պատերազմի կարիքները բավարարելու նյութական հնարավորությունների մեջ վճռական տեղը պատկանում

է սոցիալիստական ինդուստրիային, մի ինդուստրիա, որն ստեղծ-  
 վել էր դեռևս պատերազմին նախորդող ժամանակաշրջանում:  
 Հայրենական պատերազմի տարիներին սովետական ժողովրդի  
 համար առավել չափով տկնառու դարձավ այն հարցը, թե ինչու  
 համար ընկեր Ստալինն իր ժամանակին այնքան ուժգնորեն և  
 հաստատակամությամբ առաջ տարավ երկրի ինդուստրացման և  
 ռազմական արդյունաբերության զարգացման գործը: Մեր երկրի  
 հզոր ինդուստրիան լիովին ապահովեց Սովետական Բանակին  
 գերազանց սպառազինությամբ՝ նրա պաշտպանողական և հարձա-  
 կողական մարտերում, կոսկեց նրա հաղթանակը ռազմաճակատում:  
 Եթե չլիներ մեր երկրի հզոր ինդուստրիան, պաշտպանողական  
 արդյունաբերությունը, մենք անգնն կդտնվեինք մինչ ատամ-  
 ները գինված Փաշիստական բանակների դեմ, և անհունորեն  
 ծանր կլիներ մեր վիճակը, բազմաթիվ անգամ դժվար կլիներ  
 մեր Հայրենիքի անկախության պահպանման գործը, մեր հաղ-  
 թանակի գործը:

Թե ինչ չափով աճեց մեր ռազմական արդյունաբերու-  
 թյունը պատերազմի տարիներին, այն կարելի է ցուցադրել հե-  
 տեյսով տվյալներով: Հայտնի է, որ մեր տանկային արդյունա-  
 բերությունը պատերազմի վերջին երեք տարիներին ընթացքում  
 արտադրում էր տարեկան միջին հաշվով ավելի քան 30.000  
 տանկ, ինքնագնաց և զրահամեքենա, ավիացիոն արդյունաբե-  
 րությունը նույն ժամանակամիջոցում արտադրում էր տարե-  
 կան 40.000 ինքնաթիռ, հրետանային արդյունաբերությունը,  
 տարեկան 120 հազար հրանոթ, ականանետային արդյունաբերու-  
 թյունը 1942—1944 թվերին տարեկան միջին հաշվով մոտ 100  
 հազար ականանետներ: Բավական է մատնանշել, որ միայն  
 Բեռլին քաղաքի զրավման համար մեր բանակը կենտրոնացրել  
 էր 41 հազար հրանոթ և ականանետ, 8400 ինքնաթիռ և 6300  
 ժամանակակից առաջնակարգ տանկ:

Ռազմական տեխնիկայի արտադրության այսպիսի թափը  
 հանդիսանում էր մեր երկրի ինդուստրիալ հաղթանակների ար-  
 դյունքը, մեր ռազմական արդյունաբերության կազրերի ստեղ-  
 ծագործական մտքի արդասիքը, մեծ Ստալինի, մեր ինդուս-  
 տրիայի, ռազմական արդյունաբերության կերտողի, մեծագույն  
 ղեկավարի, ռազմական ստրատեգիայի և տակտիկայի մեծագույն

հանճարի գործունեության մարմնացումը: Ֆաշիստական ազդե-  
ստրների դեմ մեր երկրի տարած հաղթանակով մենք պարտա-  
կան ենք ամենից առաջ մեծ Ստալինին, նրա աննկուն և ան-  
ընկճելի կամքին, նրա հանճարեղ մտքին, նրա ամենակուսակուն  
գործունեությանը:

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՄԵՆՔ ԳՆՈՒՄ  
ԵՆՔ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻՉՄ

Հայրենական պատերազմի ամենամեծ փորձաթյուններից  
Սովետական պետությունը, մեր Հայրենիքը դուրս եկան էլ ավելի  
ամրապնդված: Մեր երկիրը նորից հնարավորություն ստացավ  
խաղաղ ստեղծագործական աշխատանքի անցնելու:

1946 թվի փետրվարի 9-ին իր ընտրողների առաջ արտա-  
սանած պատմական ճառում ընկեր Ստալինը ավելի ՍՍՌՄ-ի  
զարգացման ամենամոտակա խնդիրները և ծավալեց կոմունիզմի  
կառուցման վեթիսարի, հոյակապ ծրագիրը: Որպես մեր զար-  
գացման մոտակա խնդիրներ ընկեր Ստալինն առաջադրեց՝  
օկուպացիայից տուժած ռայոնների վերականգնման, արդյունա-  
բերություն և գյուղատնտեսության նախապատերազմյան մա-  
կարդակի վերականգնման և այդ մակարդակն զգալի չափով դե-  
րազանցելու պլանը: ՍՍՌՄ Գերագույն Սովետի սեսիայի կող-  
մից 1946 թվի մարտին ընդունված Օրենքը ժողովրդական տնտե-  
սության վերականգնման և զարգացման 1946—50 թվականների  
հնդամյա պլանի մասին, ողջ կոնկրետությամբ արտացոլում է  
ընկեր Ստալինի կողմից առաջադրված խնդիրներն ու նրա կեն-  
սագործման միջոցառումները: Ժողովրդական տնտեսության հետ-  
պատերազմյան հնդամյակի իրագործման հիմքում, որպես առաջ-  
նահերթ խնդիր, գրված է ծանր արդյունաբերության և երկա-  
թուղային տրանսպորտի վերականգնման և զարգացման հարցը:  
«Ապահովել ծանր արդյունաբերության և երկաթուղային տրանս-  
պորտի առաջնահերթ վերականգնումը և զարգացումը, — ասված է  
Գերագույն Սովետի կողմից ընդունված Օրենքում, — առանց որոնց  
հնարավոր չէ ՍՍՌՄ-ի ժողովրդական ամբողջ տնտեսության  
արագ և հաջող վերականգնումը և զարգացումը»:

Այդ նշանակում է չուղունի, պողպատի, գլանվածքի, ածուխի,  
նավթի, բնական գազի, էլեկտրոէներգիայի, մադիստրալային

շողեքարշերի, էլեկտրաքարշերի, ավտոմոբիլների, մետալուրգիական սարքավորումների, շողետուրբինների և հիդրոտուրբինների, մետաղահատ դաղդահների, դյուղատնտեսական մեքենաների, քիմիական և հանքային պարարտանյութերի արտադրության վերականգնումը և բուռն դարգացումը, նրանց գերազանցումը նախապատերազմյան մակարդակից: Այդ հիման վրա միայն հնարավոր է վերականգնել և ապա դարգացնել անտառային և շինանյութերի արդյունաբերությունը, տեքստիլ ու թեթև արդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը, տրանսպորտը, դյուղատնտեսական արտադրությունը, և բարելավել ժողովրդական մասսաների նյութական-կուլտուրական մակարդակը:

Սովետական ժողովուրդը բոլշևիկների պարտիայի և ընկեր Ստալինի ղեկավարությամբ մեծ հաջողությամբ կենսադործում է հետպատերազմյան հնգամյա պլանը:

Այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի արդյունաբերությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում չկարողացավ հասնել պատերազմի ժամանակվա արտադրության առավելագույն մակարդակի (1943 թվի) անդամ 80 տոկոսին և 1948 թվից սկսած ցած է գլորվում, թևակոխելով առավել խորը տնտեսական ճգնաժամի մեջ, այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում սկսած տնտեսական ճգնաժամը իր հորձանքի մեջ է գրավել Արևմտյան Եվրոպայի մարշալացված երկրներին, որոնց էկոնոմիկան պատերազմից հետո կադեկաղ հասնելով 1938 թվականի ճգնաժամային մակարդակին, նորից անհուսալի կերպով, 1949 թվականին, ցած գլորվեց, նույն այդ ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ի արդյունաբերությունը զարգանում է բուռն վերելքի դժով: Հետպատերազմյան 3—4 տարիների ընթացքում ՍՍՌՄ-ի արդյունաբերությունը արտադրանքի տեսակետից ոչ միայն հասավ նախապատերազմյան՝ 1940 թվի մակարդակին, այլև 1949 թ. հոկտեմբերին 50 տոկոսով գերազանցեց այդ մակարդակը:

Նույնպիսի վերելք են ապրում նաև ժողովրդական դեմոկրատիայի երկրները, որոնք ՍՍՌՄ-ի օրինակով և նրա օգնությամբ առաջ են դնում սոցիալիզմի ուղիով: Հաջողությամբ ավարտելով իրենց ժողովրդական տնտեսության վերականգնումը, նրանք նույնպես առաջ են անցել նախապատերազմյան շրջանակներից:

1946 թվի փետրվարի 9-ի իր պատմական ճառում, ինչպես մատնանշեցինք վերևում, ընկեր Ստալինը տվեց ոչ միայն հետպատերազմյան հնգամյա պլանի հիմնական խնդիրները, այլև սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հոյակապ ծրագիրը: «Ինչ վերաբերում է ավելի երկարատև ժամանակամիջոցի պլաններին, — ասում է ընկեր Ստալինը, — ասյա պարտիան մտադիր է կազմակերպել ժողովրդական տնտեսության նոր հզոր վերելք, որը մեզ հնարավորութուն տար մեր արդյունաբերության մակարդակը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ բարձրացնելու, օրինակ, երեք անգամ: Անհրաժեշտ է մենք հասնենք այն բանին, որ մեր արդյունաբերությունը կարողանա տարեկան արտադրել մոտ 50 միլիոն տոննա շուգուն, մոտ 60 միլիոն տոննա սլոդպատ, մոտ 500 միլիոն տոննա ածուխ, մոտ 60 միլիոն տոննա նավթ: Այս պայմանով միայն կարելի է համարել, որ մեր Հայրենիքը ապահովված կլինի ամեն տեսակ պատահականություններից: Դրա համար կպահանջվի դուրս երեք նոր հրեղամյակ, եթե ոչ ավելի: Բայց այդ բանը կարելի է անել, և մենք պետք է այդ անենք»: (Ստալին, Ճառ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946 թվի փետրվարի 9-ին, Հայպետհրատ, էջ 20):

Կոմունիզմի կառուցման այս վիթխարի ծրագիրը 1948 թվին ընկեր Ստալինի նախաձեռնությամբ լրացվեց մի այլ վիթխարի ծրագրով ևս: Դա դյուրատնտեսության մեջ բնության տարերքի դեմ պայքարելու ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համ Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումն էր, «ՍՍՌՄ Եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային շրջաններում բարձր և կայուն բերք ապահովելու համար դաշտասպաշտպան անտառաշերտեր ստեղծելու, խոտադաշտային ցանքաշրջանառություններ արմատացնելու, լճակներ և ջրամբարներ կառուցելու մասին», մեր էպոխայի մեծ փաստաթուղթը:

Հետպատերազմյան վերջին տարիների ընթացքում մեր պարտիան ընկեր Ստալինի ղեկավարությամբ և նրա ցուցումներով մի շարք իմաստուն որոշումներ ընդունեց կուլտուրայի, գրականության, արվեստի, բիոլոգիայի, փիլիսոփայության, ընդհանրապես իդեոլոգիական հարցերի վերաբերյալ: Այդ որոշումների իմաստը մարդկանց զիտակցության մեջ կապի-

տալիզմի մնացուկների դեմ մղվելիք պայքարն է, իդեոլո-  
գիական ֆրոնտում միջազգային սեփականության դեմ մղվելիք պայ-  
քարն է, մեր աշխատավորների կոմունիստական դատարա-  
կության դործն է:

Այսպիսով, բուլեիկների պարտիան ընկեր Ստալինի լեկա-  
վարությամբ մշակել է կոմունիզմի կառուցման վիթխարի ծրա-  
զիրը իր բոլոր կողմերով:

Սովետական ժողովուրդը կենսագործում է կոմունիզմի կա-  
ռուցման ստալինյան ծրագիրը: Հետպատերազմյան հնդամյակի  
կենսագործումը կարևոր և վճռական քայլ է կոմունիզմի կառուց-  
ման ճանապարհին:

Այն ժամանակ, երբ կապիտալիստական աշխարհը դալար-  
վում է ներքին և արտաքին հակասությունների մեջ և դեպի  
կործանումն է գնում, Սովետական Միությունը հաստատ քայ-  
լերով առաջ է գնում դեպի իր նպատակը, դեպի կոմունիզմի  
կառուցումը: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ սովետական  
ժողովուրդը կառուցեց սոցիալիստական հասարակահարգը մեր  
երկրում: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ սովետական ժողո-  
վուրդը, ամրապնդելով իր երկրի պաշտպանունակությունը, առաջ  
է գնում դեպի կոմունիզմի հոյակապ շենքի կառուցումը մեր  
երկրում: Իսկ մեր առաջխաղացումը դեպի կոմունիզմ չի կա-  
րող չմոբիլիզացնել միջազգային աշխատավորությանը սոցիա-  
լիզմի համար մղվելիք պայքարում ամբողջ աշխարհում:



Խմբագիր՝ Ա. ՄԱՐՈՒԽՅԱՆ

Տեխ. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ

---

Պատվեր № 544, տիրած 5000: Տպագր. 3 մամ.: Մեկ մամուլում 38.400  
տպանիչ: ՎՖ 04884: Հանձնված է արտադրության 19/XI 1949 թ., ստորա-  
գրված է տպելու 12/XII 1949 թ.

---

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արտվյան, 124



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0027480

-104.  
ԳԻՆԸ ԻՌ.

ЦЕНА

11  
7346